

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԳԷՍ ԱՂԳԱՑԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՇԱՀՆ ՈՒ ՀԱՅԵՐԸ

Շահը Եւրոպայէն թէհրան վերադարձին Հայոց մասնաւոր բարեացակամութիւն յայտնեց. Պարսկաստանի մէջ ամէն կողմ հայերը արտօնեալ են զպրոց բանալ, ընկերութիւններ կազմել, մամուլ հիմնել. Ամէնքս ալ մեծ ուրախութիւն կը զգանք այն բարոյական առաւելութեանց համար զոր մեր եղբայրները աւելի քան երբեք պիտի վայելեն Շահին թագաւորութեանը մէջ: Յոսանք որ Պարսկաստանի Հայոց մտաւորական ղեկաւորները հանգամանքներէն օգտուիլ պիտի գիտնան, Պարսկաստանի հայ ժողովուրդը հանդարտ յառաջդիմութեամբ զարգացնելու համար:

Պարսկաստանէն դուրս գտնուող հայերը կ'օրհնեն որ կը կազդուրին տեսնելով որ վերջապէս կը գտնուի պետութիւն մը ուր հայը իր հայրենիքին մօտ կամ անոր մէջ, նիւթապէս բաւական հանգիստ ապրելով հանդերձ իր ազգայնութիւնն ալ պահպանելու և հզօրացնելու ամէն դիւրութիւն կը վայելէ:

Հայոց նկատմամբ Պարսկաստանի Շահին ցոյց տուած համակրանքին բարեբար արդիւնքները պէտք է թէ եւրոպայի եւ թէ իսլամական աշխարհին մեծաձայն յատարարուի, իբր թիւրքիոյ Հայոց դատին նպաստող իրողութիւններ:

Պարսից Շահը որ իսլամ վեհապետ մըն է, ահա զործնականապէս կը հերքէ թիւրք շրջանակներէ տարածուած այն զրոյցները իբր թէ քրիստոնէից տրուած ո՛ր եւէ մասնաւոր առաւելութիւն իսլամները կատղեցնելու վտանգը կ'սպառնայ: Բնաւ: Միեւնոյն երկրին հայ եւ իսլամ ցեղերուն բարոյական պահանջները իրարմէ կը տարբերին: Թիւրքիոյ հայը երբեմն առանց երբեք իսլամ հայրենակիցներուն նախանձը զրգռելու ինքնավար կ'ապրէր իր մտաւորական և բարոյական կեանքին մէջ: Ինքնալ սակայն սատրապամութեան բարձրացումի յաւակնութիւն չէր մտաբերեր: Իսլամական ո՛ր և է պետութեան մէջ համաձայնութեան առաջին հիմը այդ կոռուանին վրայ կրնանք հաստատել:

Շահին հայասիրական զգացումներուն ոչ միայն Պարսկաստանի այլ ընդհանուր Հայոց պատճառած զոհունակութիւնը ապացոյց մըն է թէ մենք ո և է պետութենէ մը, որուն մէջ կ'ապրինք, անշատուելու փափագող չենք, երբ երկրին բարձրագոյն իշխանութիւնը մեզի ինք աչքով չի նայիր: Պարսկաստանի վեհապետը այսօր ապահով է որ իր անձին եւ իր կայսրութեան համար ամէն հայու անձնութիւնները եւ հաւատարմութեանը վրայ կըրնայ վստահ ըլլալ:

Բոլոր Հայոց աչքերը այժմ պիտի յառին Պարսկաստանի իրենց եղբայրներուն վրայ, դիտելու համար թէ ինչպէս պիտի օգտուին այն բարեբաստիկ թուականէն զոր Միւզաֆէրէտին շահը կողջունէ իր հայ հպատակներուն համար: Կը կարծենք թէ կամաց կամաց շատ տեղուանքէ պիտի ուզեն անցնիլ Պարսկաստան, իբր այն երկիրը որ թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս զիրենք կը զոհացնէ:

Ո՛չ միայն կը յուսանք այլ և կը հաւատանք որ Պարսկաստանի Հայոց ղեկավարները ամէն ջանք պիտի ընեն որպէս զի չըլլայ թէ Պարսիկ իշխանութիւնը իր դրացի պետութեանց հետ ո և է զժուարութեան բաղխի Հայոց պատճառաւ:

Այս խնդիրը առ այժմ բաւական փափուկ է եւ չենք ուզեր անոր վրայ ծանրանալ: Համագումար ենք թէ ընդհանուր հայ ազգը շափազանց պիտի նեղանայ եթէ երբեք ո և է հայ խումբի մը պատճառաւ Պարսկաստանի հանգօտութիւնը խոռվելու պատրուակ հայթայթուի ստար պետութեանց: Պարսկաստանը այսօր մեզի համար սիրելի երկիր մըն է, և անոր շահերը իբր մեր հայրենիքինը պէտք է որ պաշտպանենք: Պարսկաստանի նկատմամբ ուղղակի կամ անուղղակի միջոցներով ո և է նենգաւորութիւն, պիտի նկատուի ընդհանուր Հայութեան պէմ զաւաճանութիւն մը:

ԿՈՎԿԱՍՍԻ ՀԱՅՈՑ ԼՅԵՏ

Նորի կեանքի 1900 Նոյեմբեր 15 թիվին մէջ «Նուր-
բական Յիշատակի մը» վերնագրին ներքև տեսութեամբ
կը քննէի Կ. Պոլսոյ Բիզանդիոն թերթին մէջ հրա-
տարակուած գրպարտութիւն մը զոր Վառնայի Իրառանք
թերթն ալ արտատպած էր, առանց իր կողմէն «եւ է
գիտողութեան» Յօդուածս կը վերջացնէի հետեւեալ նկա-
տողութեամբ. «Ինձի համար շատ ուշագրաւ իրողութիւն
մը չէ որ Բիզանդիոն Գրիգոր Արծրունիի յիշատակը կա-
նարգէ. բայց երբ այդպիսի գրպարտութիւնները առանց
գիտողութեան կ'արտատպուին թիւրքիոյ Հայոց այնպիսի
թերթի մը մէջ որպիսին է Իրառանքը, ան ատեն կը
սկսի մտածել»։ Ու կ'աւելցնէի թէ «Իրառանք» ո՛ր եւ է
մասնաւոր պատճառ մը չունի Արծրունին, Մշակը, Կով-
կասի յառաջիմական Կուսակցութիւնը ատելու և չո-
սածքէն կը վարի անգիտակցաբար»։ Ու արդարեւ դիտե-
լի է թէ այն տեսակ մը դառնութիւնը որ ընդհանուր
կերպով այժմ թիւրքիոյ Հայոց մէջ կը տիրէ Ռուսիոյ
Հայոց նկատմամբ, մասնաւորապէս կը շեշտուի Կովկա-
սի յառաջիմական կուսակցութեան դէմ, որուն պարա-
ռաջն է Մշակը։ Հիմակ Իրառանք իր յունուար 13 26ի
թիւին մէջ կը վերագրանայ իմ յարուցած խնդրիս, գիտո-
ղութիւններ կ'ընէ, հարցումներ կ'ուղղէ ինձի։ Շիտակը
ըսելով, սո՞քոհ չմնացի Իրառանքի աչքերնուս առաջ
գրած ախտազննական տեղեկագրէն։ Հին ատենէն ի վեր
ըսած են թէ էն վտանգաւոր ցաւերը ծածուկ մնացած
ներն են։ Իրառանք ինչ որ իր սրտին վրայ ունի հրա-
պարակ կը դնէ, կարծեմ զեռ մասամբ. ու կ'ըսեմ թէ՛ ընդ-
հանրացած կարծիքներու եւ զգացումներու թարգմանը
կը հանդիսանայ։ Լա՛ւ։ Խնդիրը յուզենք, քննենք, ու-
սումնասիրենք. բայց ոչ թէ վիճաբանելու փափագով, այլ
հայ ժողովուրդը յուսաբանելու ըզձանքէն մղուած։ Վըս-
տահ եմ թէ Իրառանք կ'ընդունի այս պայմաններուն
մէջ կարծիք եւ համոզում փոխանակելու, իրողութիւն-
ներ մէջտեղ դնելու օգտակարութիւնը։ Սկիօնք։

* *

Նախ խնդիրը փակեմ։ «Բարեգործական եւ Հրատա-
րակչական Ընկերութեանց լուծուելու խնդիրը Գ. Արծ-
րունիի մահէն շատ վերջը ծնունդ առած են, կ'ըսէ Իրա-
ռանք, հետեւաբար Հայոց այդ ներքին գործերու միջա-
մտելու առաջարկութիւնը Ռուս կառավարութեան, շա-
տոնց մեռած Գր. Արծրունիի կողմէ չի կրնար ըլլալ, այլ
շատ շատ Մշակի արդի խմբագիրներուն կամ այդ թերթի
վարիչներուն կարելի կ'ըլլայ վերագրել զայն։ Ուստի

հանգուցեալ Գրիգոր Արծրունին, որուն յիշատակը ան-
շուշտ մեզի համար ալ յարգելի է, խնդրոյ նիւթ ըլլալէ կը
զարդի»։ Իրառանք այս ճիշտ գիտողութիւնը եթէ Բի-
զանդիոնի տեղեկութիւնը արտատպած առթիւ ըրած ըլ-
լար, անշուշտ առիթ պիտի չունենայ իմ յօդուածիս մէջ,
եթէ երբեք գրէի, Իրառանքի անունը յիշատակելու։ Այժմ
որ Իրառանք կը համաձայնի ինձի, գոնէ ինչ որ կը վե-
րաբերի Գրիգոր Արծրունիի, հետեւաբար խնդիրը փակ-
ուած է երկու կողմէն ալ։

Կուգամ ուրիշ կ'լտի մը։ «Խնդիրը կը մնայ Մշակի
արդի վարի չ'ներուն վրայ» կ'ըսէ Իրառանք, և կը գար-
մանայ որ իմ երկար յօդուածիս մէջ անոնց մասին բան
մը ըսած չ'ըլլամ։ Պատասխանս կ'ընտան չէ. Խնդրի ա-
ռարկան օրաթերթի մը «հանգուցեալ» եւ ոչ թէ «ողջ»
խմբագիրն էր։

Իրառանք կուզէ գիտնալ նաև թէ ինչո՞ւ անտես ը-
րած եմ Բիզանդիոնի հետեւեալ գիտողութիւնը. «Եթէ
նամակագրին գրածները ստույգ են, արդարեւ զովիւր ըն-
թացք մը չէ այս։ Այս «եթէ» վերապահուած «արդարա-
ցումը յանցանքէն աւելի ծանր» կոչուածն է։ Իրառանք
անշուշտ Բիզանդիոնը պիտի չ'արդարացնէր եթէ իր
մասին ալ կարգ մը գրպարտութիւններ յերիւրէր «եթէ
ստույգ են» ու մը։ Խնդիրը այդ «եթէ»ին վրայ է։ Ո՛վ
պիտի քննէ «եթէ»ն. ընթերցող հառարակութիւնը թէ
խմբագիրը, Ուղղամիտ եւ ազնիւ խմբագրի մը համար
«եթէ» պայմանագրութիւնը չի կրնար գոյութիւն ունենալ
երբ անհատի մը հանրային կեանքը զատապարտող ամ-
բաստանութիւն մը հրապարակ կը հանէ։ Խմբագրին
պարտականութիւնն է խղճամիտ քննութիւն կատարել եւ
հաստատ համոզում գոյացնել ու զայն հրապարակել։
Գրիգոր Արծրունին շատ ծանօթ է հայ ժողովրդին, ու
ինը տարի ալ է որ մեռած է. Բիզանդիոնի խմբագիրն
ալ հրապարակին վրայ նորեկ մը չէ, և իր քսանը հինգ
տարուան հրապարակագրութեան սիջոցին անշուշտ Գրի-
գոր Արծրունիի պէս անձնաւորութեան մը մասին որոշ
կերպով գէշ կամ աղէկ համոզում մը գոյացուցած է,
զայն թող յայտնէր։ Բայց գիտէ թէ իր գրպարտութիւն-
ները պիտի չի կրնար մտքերու մէջ սպրդեցնել առանց
այդ «եթէ»ին բարեխօսութեանը։ Նուազ նողկանք պիտի
զգայի երբ առանց «եթէ»ի խօսէր, գոնէ համոզում մը
յայտնելու քաջութիւնը պիտի ունենար։

Չի կրցի ըմբռնել թէ ինչո՞ւ Իրառանք կրնայ մտքէն
անցնել թէ Հրատարակչական և Բարեգործական Ընկե-
րութեանց կործանումը զուցէ Մշակի արդի խմբագիրնե-
րուն կամ վարիչներուն վերագրել կարելի է։ Ինքն իսկ
«շատ շատ» պայմանագրութեամբը կը հաւատտէ թէ այդ-
պիտի կասկած մը չափազանցօրէն անհաւանական երեւ-
նալու է. եւ պիտի սիրէի որ այդպիսի կասկած մը եւ
ոչ իսկ հեռուէն հետու շոշափեր թրջահպատակ հայու
մը միտքը։

Կ'անցնիմ այս ախար սիջողեպին ալ վրայէն, եւ կուգամ հաւաքածոյի մը զոր Իրաւունք կովկասի հա- կամքական թերթերէն քաղելով մեզի կը ներկայացնէ: Ինչ պատասխանեմ: «Գայլը գայլին գլխուն աւետարան չի կարդար»: րոտր էն: Կնիկներու բամբասան քնեքը ա-ւելի շահեկան կ'երևին ինծի քան թէ հակառակորդ թեր-թերու միմիանց գէմարձակած փասքուրծները: Դատապար-տութեան համար իրողութիւն պէտք է եւ ոչ թէ գա-տարկ խօսք:

Այս առիւ կը յիշատակուի նաև Մ. Շահնազարի մըն ալ վկայութիւնը: Ա՛տ ո՛վ է: Երբ «վարդապետն ա-սաց» կը յայտարարուի գոնէ վարդապետին հեղինակու-թեան որքանութիւնը իմանայինք: Ինչպէս Էրնանի Կա-րոյու Մեծի գերեզմանին վրայ «Շարլըմանեք, Շարլը-մանեք ո՛վ կայորդ հզօր» գոչելով, կը հրաւիրէր հան-գուցեալը գերեզմանէն ելլել և գալ տեսնել թէ իր յաջորդ-ները ինչ ըրին իր թաղած կայսրութիւնը. ասանկ ալ Շահնազարնիս (Մ) կոչում կ'ընէ Գրիգոր Արծրունիի ուր-ուականին: Հիւկոյական այդ բացագանչութիւնները կար-գացած պահուս միտքս եկաւ թէ Բրիտտոսի օրովն ալ Պա-ղեստինի մէջ Հրեաները շատ տարբեր չէին կովկասի մեր հիմակուան կարգ մը Հայոցմէն փարիսեցիները ան ատենն ալ կ'ողբային աներեւութացեալ մարդարէներու վրայ, եւ մեծ հեգնաբանը բծիծաղով մը գոր շարածիծի պիտի օրակէի եթէ գիտնայիր Աստուած մեզը պիտի չհամարէր, «սա դուք զաւակները չէ՞ք անոնց որ մարդարէները կը հա-լածէին եւ առաքելները կը քարկոծէին, հէ՞» կը հարցնէր:

Չեմ գիտեր թէ հայ խմբագիր մը Արծրունիի չափ հալածուած ու նախատուած է երբեք: Կարգ մը կովկաս-ցիներու ազնուագիտ զգացումները Թիւրքիոյ Հայոց աչ-քին առջեւ պայծառափայլ շողացնելու համար դէպք մը յիշատակեմ անցեալէն: Այդ դէպքը ոչ թէ կիներոսներու, կամ ըստ մեզ՝ բարոյականներու, այլ «երուպականաց-եալ» ինդելիգիտներու կեանքէն կ'անսեմ:

Քամառ-Քամիպան, որ Արծրունիին շատ բան պար-տական էր, ու անոր սեղանակիցն էր ամէն անգամ որ Թիֆլիս երթար, օր մը դէշ ներշնչումի մը րոպէին, խայ-տառակ կատակերգութիւն մը կը գրէ Մշակի խմբագրին անհատական կեանքէն. բայց իր ըրտծին անշուշտ ինքն ալ զզջացած, ձեռագիրը մէկգի կը նետէ ու կը մոռնայ զայն: Մայր-Արաբսիի հեղինակին, կամ աւելի ճիշտը՝ մէկ հինգերորդ հեղինակին (ըստ աւանդութեան), մահէն ետքը այդ անտարկը չեմ գիտեր ինչպէս կ'ըլլայ Արձա-գանգի խմբագրին ձեռքը կ'իյնայ, եւ ան ալ կը փութայ անմիջապէս իր թերթին մէջ հրատարակել, կարծելով թէ Քամառ-Քամիպայի մէկ անազնուութիւնը կրնայ հաստիւր հարուած մը ըլլալ Գրիգոր Արծրունիի և Մշակի գլխուն: Ալ ինչ երկարեմ:

Իրաւունքի խմբագրութիւնը չեմ մեղադրեր իր սխա-

լումներուն համար, վասն զի Թիւրքիոյ հայերը ինչպէ-որ պէտք է չեն ճանչնար կովկասի Հայոց կեանքը: Ա-նոնց եօթը ձեռը—կամ ըստ պոլսական բացատրութեան «օխար պորտը» ճանչնալու է, որպէս զի կարելի ըլլայ չիմ ըսեր առանց սխալելու, բայց առանց չափազանց օրէն սխալելու, կարծիք մը յայտնել անոնց գործերուն վրայ:

Չեմ հասկնար նաև թէ ինչու իմ օձիքէս պէտք է բըռ-նել: Մշակի եւ Էջմիածնի միջեւ ծագած ինդիքներու մա-սին: Կամ թէ ինչու հարկ է որ ես անպատճառ պարտա-ւոր ըլլամ տեղը կայ չի կայ «հիմակուան» Մշակի վրայ ալ խօսելու: «Խնդիրը կը մնայ, կ'ըսէ Իրաւունք, Մշակի արդի վարիչներուն վրայ: Բայց զարմանալի է ոց Պ. Արփիւր իր երկար յօդուածին մէջ անոնց մասին բան մը ըսած չէ:» Բայց ինչու զարմանալի է: Միթէ, կամ թէ ինչպէս անդին կ'ըսեն «միթէ, զի ալ «Գալիլեացի» կը համարին: Ինչ և է, որովհետև իմ կարծիքներս իմանալ անօգուտ չեն սեպեր, եւ ալ առանց քաշուելու պարզօ-րէն կը խօսիմ:

Ազգային դժբաղդութիւն է Հայրիկին ու կովկասի յառաջդիմականներուն միջեւ գծաութիւնը, որ օակայն անխուսափելի շարիք մըն էր: Կովկասի երկու կուսակ-ցութիւններն ալ կուզեն Կաթողիկոսը իրենց բացարձակ ազդեցութեան ներքեւ պահել: Մակար Կաթողիկոսի վախ-ճանումէն ետքը Հայրիկ Մշակի ընտրելին էր, որուն գլմ պահպանողականները՝ իրենց դուս ունենալով Արձա-գանգը, Աւրբան խօրէն պատրիարքը հանած էին: Ընտ-րութիւնը յառաջդիմականներուն յաղթանակը ապահո-վեց. իսկ իրենց հակառակորդները ուզեցին իրենք քաղել այս մեծ յաջողութեան բոլոր օգուտները: Նորընտիր Հայ-րապետը և իրեն ջերմեռանդ պաշտպանները իրարմէ բաժ-նելով պիտի կրնային հասնել իրենց բաղձանքներուն: Արձագանգի խմբագիրը անմիջապէս իր մէկ քորը, հիմակ վախճանած, Թիֆլիսէն Երուսաղէմ շտապեցուց: Հայ-րիկ-Կաթողիկոսի ձեռքէն առաջին հաղորդութիւնը առ-նելու արժանացող առաջին կովկասուհին ըլլալու փա-փաքով կ'երթար իբր թէ: Պատգամաւորուհին կանացի թուրքերանութեան մը կատակերգութեամբը սկսաւ միա-մտօրէն պատմութիւններ ընել, և անցողաբար խօսքեր սպրդեցնել Արիտակէս եպիսկոպոս Սեպրակեանի «հա-կախիմանական դաւերուն վրայ:» Պէտք է յիշել որ Մակար Կաթողիկոսի մահէն ետքը, Երեմիա եպիսկո-պոսին տեղապահութեան միջոցին, իրական իշխանութիւնը Արիտակէս եպիսկոպոսը կը վարէր. պահպանողականու-հին Հայրիկին հաւտացուց որ իր կաթողիկոսութիւնն ալ անուանական ընել պիտի ուզէ Արիտակէս եպիսկո-պոսը: Ու երբ այս վերջինս իբր հրաւիրակ Երուսա-

դէմ գնաց, կաթողիկոսը արդէն իրեն դէմ նախապա-
շարուած դասւ:

Անհամաձայնութիւնը, պահպանողականներուն վար-
պետութեամբը, Երուսաղէմ օկսարձ, շարունակուեցաւ մին-
չեւ Էջմիածին օւ վերջնական խզումի յանգեցաւ: Կաթո-
ղիկոսը բաժնուելով Արիստակէս եպիսկոպոսէն, կը բաժ-
նուէր եւ յառաջդիմականներէն. պահպանողականները
իրենց նպատակին հասած էին:

Անկարող եմ այս բաժանումին բոլոր մանրամասնու-
թիւնները առաջ բերել, եւ ութ տասը տարուան պատ-
մութիւն մը իր ամբողջութեամբը ներկայացնել: Ընդ-
հանուր հայեացքով մը ինծի այնպէս կը թուի թէ ով որ
ալ կաթողիկոս ըլլայ այսուհետեւ, Իզմիրլեան պատրի-
արքը թէ Արիստակէս եպիսկոպոսը, միշտ Հայրիկին պէտ-
զժբարդ պիտի ըլլայ: Կովկասի «գաղափարային» հու-
օակցութիւններէն իւրաքանչիւրը սիրահար կ'ընդ մը պէտ-
կուզէ կաթողիկոսը ամբողջապէս իրեն գրաւել, առանց
անոր օրտին մէջ իր հակառակորդին համար համակ-
րանքի նշոյլ մը հանդուրժելու: Թո՛ղ շխրտչին Կովկաս-
ցիները երբ կարծիք յայտնեմ թէ, հայ ժողովուրդը գա-
ղափարային կուսակցութիւններ կազմելու շափ տակաւին
չէ զարգացած: Եւ գուցէ երբեք չզարգանայ ալ: Իր նը-
կարագիրը ըմբօստանալ կը թուի անզլիական կամ ա-
մերիկեան դրութեամբ կուսակցութիւններու օտեղծման:

Կովկասի յառաջդիմական եւ պահպանողական կը-
սիւններու մանրամասնութիւնները իրենց օտիական կա-
րևորութիւնը կը կտրսնցնեն կուսակցական այս ընդհա-
նուր տեսութեան մէջ: Աւելորդ պիտի ըլլար ուրեմն նը-
կատողութեան առնել Էջմիածնի գանձարանէն զօղու-
թեան մը սուտին խնդիրը զոր կ'Պոլսոյ Բիագանդիոնը
Դավրէթէն թղթակցութեամբ մը հրատարակեց երեք շորս
տարի առաջ: Իրատուանք այդ մեքենայութիւնը Մշակա-
կան դաւի մը կը վերագրէ, առանց սակայն ո՛ր եւ է փաստ
մը առաջ բերելու: Բիագանդիոն այդ առթիւ իր թղթակիցը
«ապուշին մէկը» հռչակեց: Այդ նենգութեան պատաս-
խանատուութիւնը Թիֆլիսի Մշակին վրայ ծանրացնելու
համար Դավրէթաբնակ Պոլսեցիի մը ապուշութիւնը պէտք
եղածին շափ զօրաւոր ապացոյց մը չէ:

* * *

Հիմակ կ'անցնիմ շատ փափուկ և միանգամայն շատ
ծանր նկատողութեան մը: Իրատուանք հետաքրքիր ըլլա-
լով գիտնալ թէ Մշակի արդի վարիչներու մասին ինչո՞ւ
լուս կը մնամ իմ երկար յօդուածիս մէջ, գիտել կուտայ
թէ «կամովին իր այս լուրթիւնը մեզ օտ կասկածը կու-
տայ, թէ Պր. Արփիար յիշելով Մարտի և Նոր կեանքի
մէջ գրած իր շատ մը յօդուածները, հակառութեան մէջ
իյնալու վախ մը ունեցած է Կովկասահայ ազատական
գաօնն ներկայացուցիչ արդի Մշակականները պաշտ-

պանել: Կովկասահայ գործիչները առաւ կառավարու-
թեան գործիչներ են ըսող Պ. Արփիարը արդի Մշակա-
կաններուն համար Բնչ պիտի ըսէր: Այս հնարքը մեզի շատ
կը հետաքրքրէ:»

Հարցումին պատասխանը իր մէջն է: Այլ է Կովկա-
սահայ գործիչը, այլ՝ Մշակի խմբագիրը: Ո՛չ Մշակ, ո՛չ
Տարագ, ո՛չ Մարտ, ոչ ուրիշ ո՛ր եւ է թերթ գործիչ են
Անոնց խմբագիրները իրենց խմբագրական պաշտօնին
մէջ սահմանափակուած կը մնան:

Իսկ առաջահայ գործիչները ո՛չ յառաջդիմական, ո՛չ
պահպանողական կուսակցութեանց մէկուն կը պատկա-
նին բացարձակապէս: Մշակականներ ալ կը գտնուին ի-
րենց մէջ և հակամշակականներ ալ, պահպանողականներ
ալ և անոնց հակառակորդներէն ալ: Կովկաս կան Մշա-
կականներ որ կը համակրին այս գործիչներուն, կան որ
կը հակառակին անոնց. պահպանողականներ կան որ ա-
նոնց բարեկամ են, կան ալ որ թշնամի: Հետեւաբար
այդ գործիչներուն մարմինը ո՛չ յառաջդիմական, ո՛չ պահ-
պանողական կը համարուի:

Այս առթիւ գիտել կուտամ որ ոչ թէ Կովկասահայ
բոլոր գործիչները, այլ անոնց մէկ մասը միայն մեր ազ-
գային շահերուն հակառակող քաղաքականութեան մը
գիտակից գործիչները նկատած եմ խորին համոզմամբ:
Իսկ մեծամասնութիւնը անգիտակցօրէն կը վտանգէ Հա-
յաստանի թէ ներկան և թէ մանաւանդ ապագան, ինչպէս
երբեմն Ներսէս Աշտարակեցիս ու իրեն հետ խումբ մը
պարսկահայեր Երեւանեան նահանգը փրկենք ըսելով
վերջնապէս կորսնցուցին զայն: Բայց այժմ Կովկասի
մէջ մտքերը օկոած են տագնապիլ, եւ մտատանջութեան
մէջ ինկած են ամէն անոնք որ ճշմարտապէս Հայաս-
տանի բարիքը կուզեն, եւ ոակայն կ'անգրագառնան թէ
իրենց նպատակին բոլորովին հակառակ արդիւնքներ ե-
րևան կուգան:

* * *

Առ այժմ ինչիրը հօօ կը թողում. գրածներս ծանօ-
թագրութիւններ կրնան օեպուիլ եւ ոչ թէ ընդարձակ
տեսութիւններ: Մակայն կը յուսամ թէ իրենց համառօ-
տութեանը մէջ իսկ անոնք քիչ շատ ծառայութիւն մա-
տուցանեն Կովկասեան Հայոց ներքին կեանքով հետա-
քրքրուող թրքահայատակ հայերու:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՍՈՒՐՃ ԱՄՍԱԳԻՐԸ

Պ. Կ. Կրասիլնիկեան այս ամառ գնեց Թիֆլիս հրատարակուող Մարձ ամսագիրը որ տասերկու տարի է ի վեր կը հրատարակուէր Պ. Աւետիք Արաօխանեանցի խրմբագրութեամբ: Ամսագիրը նոր խմբագրութեամբ մը կը թնակուիսէ նոր շրջան մը որուն առաջին թիւը հրատարակուեցաւ յունուար 1ին:

Այս հանգեալը ընդհանրապէս 256 մեծագիր երեսով երեւան պիտի գայ. յունուարի պրակը օակայն 284 երես կը պարունակէ, եւ յաւելուած մը որ պիտի շարունակուի: Լա Բուլլիի վրայ, մաքուր ապագրութեամբ տարեկան 3,000Լն աւելի էջով հատար մը պիտի կազմուի: Հանգեալը պէտք ունի 800 բաժանորդի որպէս զի իր տարեկան ծախքը ցոյցէ: Կարգաւոր Մարձի յունուարին թիւը, ապաւարութիւննիս այն եղաւ որ այգորինակ հանգեալ մը եթէ Պալիս հրատարակել հնարաւոր ըլլար, տարակայն չի կայ թէ առանց ու ե գծաւարութեան շատ դիրութեամբ աւելի քան 800 բաժանորդ պիտի գտնուէր:

Մարձը, դատելով այս առաջին թիւէն, ոչ միայն իր ծաւալովը այլ և պարունակութեամբն ալ պիտի հաւասարի եւրոպական նմանօրինակ հրատարակութեանց: Յաջորդ թուով կը խօսինք նիւթերուն վրայ: Հետաքրքիր ենք տեսնելու թէ Ռուսիոյ հայերը ինչ ընդունելութիւն պիտի ընեն այդ հանգեալին:

Հանգեալին խմբագրապետը տակաւին չէ օրոշուած: Արտօնատէրը՝ Պ. Կրասիլնիկեան ինքն է որ առժամաբար կը վարէ խմբագրապետի պաշտօնը որուն մէջ հասանօրէն ինք կը հաստատուի վերջնապէս: Ռուսիոյ տըպագրական օրէնքները հիմնովին կը տարբերին թրքականներէն: Պալիս թերթի մը արտօնատէրն է եւ անօր խրմբագրապետը ու պատասխանատուն կառավարութեան առջեւ: Ռուսիոյ մէջ արտօնատէրը պարզապէս սեփականատէր մըն է, ուրիշ ոչինչ. ամէն ինչ խմբագրապետն է, ուստի եւ ան է որ կը վաւերացուի կառավարութեան կողմէն: Թիւրքիա թերթ մը անձի մը առժամայ սեփականութիւնն է. արտօնատիրոջ մահուամբ թերթին ալ գոյութիւնը կը դադրի. ժառանգորդները օրինական իրաւունք չունին զայն իբր իրենց սեփականութիւնը հրատարակել. իսկ Ռուսիոյ մէջ թերթ մը կալուածի մը պէս կը վաճառուի, կը փոխանցուի, ժառանգութիւն կը մնայ. ուստի կառավարութեան համար կարեւորութիւն չունի այն խնդիրը թէ թերթի մը աէրը ով է, մանուկ մը, ծեր մը, կին մը թէ երիտասարդ մը: Պատասխանատու վարիչը խմբագիրն է:

Պ. Կրասիլնիկեան թերթին խմբագրապետը մնալով,

խմբագրութեան մեայուն անգամներն են Պ. Լեւոն Սարգսեան և Պ. Լէօ, երկուքն ալ լրջամիտ առաջնակարգ գրական հեղինակութիւններ: Այնտասակիցներու ցանկին մէջ կը տեսնենք Ռուսիոյ Հայոց էն փայլուն անունները, որոնցմէ շատը այս առաջին թիւին իսկ իրենց հարկը վճարած են: Ակներև կը տեսնուի թէ Մարձը յառաջիկայ մտկան հանգէս մըն է:

Հայ ժողովուրդը Մարձը ոչ թէ առ «ի քաջալերութիւն խմբագրին» պէտք է ստանայ, այլ այն համոզմամբ թէ անօր մէջ պիտի գտնէ իր սրտին հաճոյք, իր մտքին գոհացում պարգեւող նիւթեր:

Յուսալիր ենք որ Թիֆլիսի հանդէսը ոչ միայն ծաւալով մեծ պիտի համարուի այլ եւ իր պարունակութեամբը, եւ հզօրացէս պիտի ներգործէ Հայ ազգին մտաւորական շարժումին վրայ:

Մարձի բաժանորդագրութիւնը կրնայ աման համարուիլ բաղկատմամբ իր ծաւալին. Եւրոպայի մէջ այդպիսի հրատարակութեան մը համար կրկնապատիկ գինը կը պահանջուի: Արտասահմանի հայերը կրնան Թիֆլիսի ամսաթերթը օտանալ տարեկան 30 Ֆրանքով, վեցամսեայ 18, իսկ հատը՝ 3: Դրամը պէտք է ուղղակի զրկել Մարձ հանգեալին հասցէին, Թիֆլիս (Քօքազ Ռիւսի):

Մեր ընթերցողները գիտնալու են որ նամակի մէջ թղթագրամ գնել եւ զրկելը վտանգաւոր է. թղթատունը կը գրաւէ երբ անգրագանայ:

ՇԱՀԻՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

(ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ԲԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ)

«Այն օրէն որ Գեղարքայի Թագաւորներու գահը եւ իրանի կայսրութեան Շահնշահութիւնը մեր Օգոստոս փառ անձնաւորութեան վիճակուեցաւ, մենք իբրև երախտագիրտութիւն առ Աստուածային Նախախնամութիւնը, մեզի շնորհած ողորմութեան ճառագայթները տարածեցինք մեր կայսրութեան բոլոր բնակիչներուն վրայ, ինչ ազգի, ցեղի ու կրօնքի ալ որ պատկանէին անոնց. եւ ամէնքը Հայրենիքի զաւակներ համարելով՝ ամէն առիթի և ամէն պարագայի մէջ բան մը չխնայեցինք անոնց բարօրութեանը համար: Յոյս ունինք որ ամենակարող Աստուծու օգնութեամբ հիմակուրէն աւելի վայելելով երկնային օժանդակութեան շնորհը, մեր այս սուրբ պարտականութեան մէջ աւելի աջողութիւն գտնենք:

Եւ արդ, բան մը որ մեր սրտին բարի իղձերուն կատարելապէս կը համապատասխանէ, այն է թէ մեր կայսրութեան հայ ազգաբնակչութիւնը որ հին ժամանակներէ ի վեր բնակած է առ ոտս Պարսից արքայական գահուն,

և որ միշտ հաւատարիմ հպատակութեան և հայրենասիրութեան ապացոյցներ է տուած, այժմ մասձեր է իր զրպարոցներուն թիւը աւելցնել, ու թէ՛ Թէհրան, թէ՛ Գարեթ, և Պարսկաստանի ուրիշ գաւառներ հաստատել մէկ քանի կեդրոնական նշանաւոր զպրոցներ, ու այս առթիւ մեր Օգոստոսափառ Վեհափառութենէն արտօնութիւն է խնդրած այդ զպրոցներու բացմանը համար: Հայկրոն այդ նպատակը մեր օրտագին փափագներուն համաձայն գտնելով, եւ նկատելով որ այդ նպատակը մեր հպատակներուն յառաջդիմութեան պատճառ պիտի դառնայ կրթութեան, արհեստներու եւ երկրագործութեան ասպարէզներու մէջ, եւ միջի պիտի հանդիտանայ վաճառականութեան զարգացումին, ոոյն արքայական հզօր ֆէրմանով անոնց արտօնութիւն կը շնորհուի Պարսկաստանի Հայ զպրոցներու բացման համար, և այդ զպրոցները մեր մասնաւոր հոգածութեան ու պաշտպանութեան տակ առնելով կը հրամայենք որ այդ ձեռնարկութեան համար յատկացուած գումարները գործածուին սոյն գործին ձեռնարկողներու և հոգաբարձուներու պատրաստելիք կանոնագրին համեմատ որոշուած ծախսերու: Բոլոր հաստատուած զպրոցները ընդհանուր կերպով մեր արքայական անձնաւորութեան պաշտպանութեան տակ դնելով, կը հրամայենք որ մեր բոլոր պաշտօնեաները ամէն տեսակ աշակցութիւն և օգնութիւն նուիրեն սուրբ գործի աջողութեան համար:

Տրուած Բէճիպ ամիօր 1318 թիւին:

ՎԱՅՐԵՆՍԱՍՏԱՆԷ ՄԸ ԳԷՇ

Եւրոպական թիւրքիոյ վիճակը նկարագրող հետեւեալ թղթակցութիւնը Տէյրի Նիզգէն աննելով կը հրատարակենք: Եւրոպա իր աչքին առջեւ տեսածներէն կրնայ որոշ գաղափար մը կազմել աւելի հեռուն գտնուող «վայրենաստան»ներու կացութեան վրայ: Ու մենք հայերս ալ քիչ շատ կը սրտապնդինք իմանալով որ աղիտաւոր աշխարհը մեր հայրենիքը չէ միայն: Ու երբ մեծ պետութիւն մը մէկ ծայրէն միւսը ահեղապէս կը տանջուի, տագնապին պայթման ժամը մօտալուտ պէտք է ենթադրենք:

ՍԷԼԱՆԻԿ ԲՈՆՈՒԱՐ 29

«Գոսովոյի նահանգին Մալէլ գաւառակին Բապովօ գիւղէն խաղաղաբարոյ անձ մը վերջերս պովկար աւազակներու խմբակէ մը հրաման կ'ստանայ 50 օսման,

եան սօկի վճարել իրենց: Մարդուն մերժողական պատասխանին վրայ, աւազակները անոր բոլոր ընտանիքը կը խողխողեն, ու տունն ալ կրակի կուտան: Մարդը կը յաջողի ինքզինքը ազատել ստորերկրեայ նկուղի մը մէջ պահուելով: Ժանտարմաները, եղելութիւնը իմանալուն պէս, ոճրին վայրը կ'երթան, աւազակները կը հալածեն, ու անոնցմէ երեքը կը սպաննեն:»

Վերոգրեալ հատուածը բառական թարգմանութիւնն է անցեալ իրիկուն տեղակէ: Երազրի մը մէջ հրատարակուած լուրին: Էրազրական գրաքննիչը, որուն ձեռքէն կ'անցնի ամէն բան՝ հրատարակուելէ առաջ, ակնբռնաբար ճիշտ կը նկատէ եղելութիւնը: Այս տեղի պատճառական շրջանակներուն մէջ հարցաւորձ ընելու, ինծի ըսուեցաւ որ թէպէտ մանրամասնութիւններ կը պակսին — ըստ որում ոճրին վայրը ուրիշ նահանգի մը մէջ է, — սակայն կը կարծուի որ լուրը ինքնին ճիշտ է:

Իչթիպի մէջ, գործերը իրենց առերևութ հանդարտութեան սովորական ընթացքը վերսկսած են: Աստի մանակեայ խաղաղացում մը ձեռք բերուած է. բայց բաւական ժամանակ պիտի տեւ մինչեւ որ գործերը եւ ընտանեկան յարաբերութիւնները ինքզինքնին գտնեն՝ իրենց վերջերս կրած ցնցումէն: Ամէն պարագայի մէջ, փոթորիկը նուաճելու համար ձեռք առնուած տնօրինութիւնները՝ մշտական հանդարտութիւն մը չեն խոստանար:

Ամէն դասակարգի ու վիճակի կասկածելի ժարդիկ ուսուցիչ, վաճառական ու ագարակապան, ձերբակալուեցան ու իւսկիւպի կեդրոնական բանտը տարուեցան: Ասոնցմէ ոմանք վերջէն արձակուեցան, միւսները տակաւին դատաստանի կը սպասեն: Անոնք որ վարժուած են թիւրքական արդարութեան ոլոր մոլոր ընթացքին, կարծիք կը յայտնեն թէ այդ բանտարկեալներուն ազատուածը կախում ունի ոչ այնչափ իրենց յանցանքին մեծութենէն որչափ իրենց քսակին խոշորութենէն: Հաւաքական ձերբակալումները թիւրքական գատավարութեան սովորական յատկանիշը կը կազմեն, բայց շատ քիչ անգամ յանցաւորներուն պատժողութեանը կը ծառայեն: Մէջերէն մէկը իբր նոխազ քաւութեան կ'առնուի, և զրացիներուն յանցանքը ինք կը տուժէ: Երբեմն ալ, շատ մը մարդիկ անխտիր ու կուրօքէն կը պատժուին, օտ հին բարի սկզբունքով թէ կրնային յանցանքը գործած ըլլալ եթէ նոյն իսկ իրօք գործած չեն, և թէ, ամէն պարագայի մէջ, իրենց զլխուն եկած փորձանքը կրնայ բարերար ներգործութիւն մը ունենալ միւսներուն վարժունքին վրայ: Բայց ամենէն սովորական դրութիւնն է ամէնքը մէկէն բանտ նետել մեծ զոնն, եւ, իրարանցումը հանդարտելուն ու հասարակաց սւշադրութիւնը ուրիշ կողմ դառնալուն պէս, ետեւի զոնէն արձակել զանոնք — փոխարինութեամբ մը: Այսպէս, Արդարութեան ցասումը կը հանդարտի, անոր պաշտօնեաններուն զըրպանները կը լնան, ու ամէն գործ կարգի կը մտնէ ի

մեծ գահունակութիւն ամենեցուն, բացի խեղճ գեղացիներէն, որոնք հաշուի չեն դուրսի:

Տեղական իշխանութիւնները միշտ կամ իրենք միայնակ պախարակելի չեն արգարութեան այս ամօթալի խայտառակութեանը համար: Վարչական մարմինը այնչափ ապականուած է բուն իսկ հիսկէն, որ անոր ոչ մէկ անդամը կրնայ պարկեշտօղէն գործել անֆլաս: Օրինակներ կան կորովի եւ ուղղամիտ պաշտօնեաներու որոնք պարկեշտօրէն գործելու, վտանգաւոր փորձք փորձած են: Պաշտօնանկութիւնը եղած է իրենց վարձատրութիւնը: Գլուխը գտնուող մարդիկը բնաւ չեն հաւանիր այդ կարգի նորութիւններու: «Գողցիք ու ապրէ, կողոպտէ ու առաջ գնա», տիրող դաւանանքն է առիկա, և վայ անոր որ կը համարձակի այդ պատուիրանքէն զարտուղի:

Վերջերս պատուական տոթ մը անեցայ թիւրք կառավարական մեքենային գործերը ուսումնասիրելու: Գիտէի արդէն, ինչպէս ո և է մարդ որ քիչ շատ այդ երկրին մէջ ապրած է, թէ ժանգոտած ու անպիտան գործիք մըն է առիկա, բայց անձնական փորձառութեամբ ալ անչի հիմնական գաղափար մը կրցայ կազմել այդ մասին:

Մակեդոնիոյ մէջ աստանդական պտոյտներու միջոցի, քաղաք մը կանգ առի, որուն անունը լաւագոյն կը համարիմ չիշիշի՝ բացայայտ պատճառներով. տեսայ որ քաղաքը անսովոր իրարանցումի մը մէջ էր, և շուտով իմացայ թէ այդ տակնուվրայութեան շարժառիթն էր ահեղ հրոստիմբի մը երևումը քաղաքին շրջակայքը: Աւազակները գիշերը անցուցեր էին մօտակայ գիւղ մը, որուն բնակիչները լուրը քաղաք բերած էին՝ իրենց անկողի հիւրերը մեկնելուն պէ: Գայմագամը, ժանտարմաներուն եւ քաղաքին պահպան գործին գլուխը անցած, երկու օր առաջ ճամբայ ելած էր շարագործներուն ետեւէն. և միակ հետեակ զապթիէ մը թողուած էր՝ կառավարական պաշտօնատունը պահպանելու:

Յաջորդ օրը գայմագամը ետ դարձաւ իր գորքերովը — 200 հոգիէն անչի — հետը բերելով միակ կալանաւոր մը: Չեղք բերուած արդիւնքը յուսախաբական էր, մանաւանդ որ շատ ալ ստոյգ չէր թէ այդ կալանաւորը ո և է վերաբերութիւն ունէր աւազակներուն հետ: Բայց, միւս կողմէ Արդարութիւնը վրէժի ծարաւի էր, ու գայմագամն ալ փառքի: Երեք օր շարունակ մակեդոնական լեռները պրպտելը պէտք չէր օր պարապը երթար. պէտք էր որ մէկը տուժէր այդ թափուած կորովին և կրուած նեղութիւններուն տեղը: Հետևաբար ... աւազակներուն ակամայ հիւրընկալները եղած գիւղին միւտիքը ու երեւելիները ձերբակալուեցան, շղթայի զարնուեցան, եւ, յաղթականօրէն, քաղաք բերուեցան: Իրենց միակ յանցանքը, որչափ որ արևմտեան աչք մը կրնար տեսնել, օտ էր թէ աւազակներէն կողոպտուած էին: Բայց գայմագամը արևելեան կերպով կը տրամաբանէր. «Ասոնց չը-

նարհակալ ըլլալու չէ՝ աւազակութեան լուրը իմաց տուած ըլլալուն համար, հապտ խօտի պատճելու է անչի կանուխ իմաց տուած չ'ըլլալուն, որպէս զի կարենայի ժամանակին ձեռք անցընել աւազակներուն օձիքը:» Այսպէս խորհրդածեց, եւ հրամայեց որ առատաձեռն պատիժ մը տրուի իրենց: Սոսկալի խարազանին շաշիւնները և ձեռքը ուտող մարդերուն աղաղակները քիչ ետքը իմաց տուին թէ հրամանը կը կատարուէր:

Ասիկա տնշուշտ աւազակութիւնը զսպելու յանձնարարելի մէթոս մը չէր, բայց ո՛ր եւ է պարտաւանքի առարկայ պիտի չըլլար եթէ, ատկից առաջ, գայմագամը ըստ երեկոթին պարկեշտ և՛ ամէն պարագայի մէջ՝ կորովի ջանք մը ըրած չըլլար բուն յանցաւորները ձեռք անցընելու: Սակայն, առանց հրամանի այդպէս կորովի ընթացք մը ունենալը պատիժի արժանի էր. գայմագամին այս ծայրայեղ եռանդը պէտք էր զօպուեր, ու քիչ ետքը պաշտօնանկ ըրին զինքը: Երբոր եռանդի ու գործունէութեան ամենայնտիս երեւոյթը անգամ պաշտօնանկութեամբ կը վարձատրուի, երբոր ապիկարութեան ու ապուշուութեան քաջալեր կը կարողացուի, ալ ինչո՞ւ զարմանանք անշարժ ծուլութեան ու անձեռնհասութեան օրինակներէն որոնց ամէն քայլի կը հանդիպինք: Ստորագասներու անբաւական և ուշ վճարում, ու մեծերուն քով՝ քաղաքական նկատումներ, նոյնպէս կը նպաստեն անգամալուծելու անհասներու ճիգերը, և Մակեդոնիան անչի անապահով ու անչի անմատչելի նահանգ մը դարձուցած են քան կեդրոնական Ափրիկէի վայրենաստան մը:

ԱՐՑՈՒՆՔՈՏ ՀԱՅՇ

Գ.

Ֆինէլլա Լիվրուլ կը հասնի, անկից երթալու համար իր դժպիտի մօրաքրոջը՝ Միս Թրէսոսքի մօտ: Կառախմբին մէջ իրեն կը հանդիպի Ժօզէֆ Պլաք անուն անձ մը: Մեր Գարա Օղլուն է առիկա, որուն ամենուրեքութեան չըլլալէ ձիրք մը կը վերագրէ անգլիացի հեղինակը, եւ որ Պոլսէն մեկնելէն ի վեր իր անունը անգլիացուցած է բնականաբար: Ֆինէլլա չի ճանչնար զանի, — կը յիշենք որ աւազակը միշտ կը ծպտուէր. տարտամօրէն կը յիշէ այդպիսի դէմք մը տեղ մը տեսած ըլլալ, ու ատոր նմանող ձայն մը իմացած ըլլալ այլուր, բայց ոչ անչի:

Հայ Գոմիթէն վեց ամիս պայմանաժամ տուած է Գարա Օղլուի՝ ազամանդները գտնելու համար. ու ան ալ Սամսունէն Պոլիս ու Պոլիսէն Անգլիա մանկամարդ աղ-

չըկան ետեւէն կ'երթայ. վեց ամսուան պայմանաժամ լիովի կը բաւէ հայ աւագակին՝ իր նպատակին հասնելու համար: Ողորջի խօսքերով գարպաս կ'ընէ անզուհին, թիւրք վարչութեան ու ան անիծեալ Համիտին գէմ բոլոր կատաղութիւնը կը թափէ, Միս Ֆինկլայէն կ'իմանայ թէ Պինկլըն պիտի երթայ, ու արտօնութիւն կը խնդրէ երթալու իր մեծարանքները մատուցանելու հոն մանկա- մարդ աղջկան, որ վերջապէս հազիւ կը յաջողի օձիքը ազատել այդ անհարկի ու շատզրուց ուղեկցէն:

Ֆինկլայի Պինկլըն անցուցած երեք չորս ամսուան կեանքին նկարագրութիւնը, որ գրեին մէջ բաւական տեղ մը կը բռնէ, շատ շահեկան չէ, ուստի մէկ քանի խօսքով անցնինք վրայէն: Թող բաւէ գիտնալ թէ Միս Թրէսոսը նամակին մէջ երեցած շար ու քարօրտ պառուր չէ. խոր- տակուած կեանքով, շախշախ օրտով խեղճ կին մըն է, որուն մէջ երբեք սպիացած չէ խաբուած յոյսերուն ու անմատչելի մնացած երանութեանց թողած վերքը: Ֆի- նկլա գողտր ու քնքուչ ձեռքերով կ'աշխատի դարմանել այդ վերքը, ու օրտառու տեսարան մըն է ան ուր պա- րուր լալով իր քեռորդիին թեւերուն մէջ կ'իյնայ, մոռնալով անցեալ նախատինք ու թշնամանք:

Պինկլընի մէջ է որ Ֆինկլա կը հանդիպի տարօ- բինակ անձի մը որ այս վէպին մէջ բաւական կարևոր դեր մը պիտի խաղայ վերջէն: Իրենց դրացի հողատէր մըն է, Գոլթըն Բին անուն կոյր մը, խրոխտ հոգիով ու փափուկ զգացումներով մարդ մը որ ինքզինքը բանաստեղ- ծութեան տուած է, որ առտուան շաղերուն ու իրիկ- նամտի անզորութիւններուն մէջէն յաճախ կը պտըտի քայլամուրր, երկնքին ու հողին աղաղակելով իր մենա- տրութեան մասը տրամութեանը մէջ շինած քերթուած- ները: Անմիջապէս կը հասկնայ Ֆինկլայի հոգիին բո- վանգակ ազնուութիւնը ու մաքրութիւնը, անոր բարեկա- մութեանը կը պլլուի անձկտգին, ու քիչ քիչ այնքան կը կապուի անոր որ, իր զգացումներուն ուժգնութենէն պար- տուած, օր մը վերջապէս դողալով Ֆինկլայի կ'առաջարկէ իր կինը ըլլալ: Մանկամարդ աղջիկը յուզումէն կը սկսի լալ, հեծկտուքը ձայնը կը խեղդէ:

— Ա՛խ, կը ցաւիմ, շա՛տ, շա՛տ կը ցաւիմ, բայց...
 Իր սիրտը, իր կեանքը էրատուախն են միշտ: Երբ- տասարդը կ'. Պոլսէն կը գրէ միշտ իրեն: Հայկական հար- ցին վրայ, որ Եւրոպայի մէջ օրուան խնդիր մը դարձած է, հատոր մը հրատարակած է որ մեծ ուշադրութիւն կը գրաւէ: Իր անունը կը սկսի ճանչցուիլ, եւ հեռու չէ թերևս այն օրը ուր պիտի կրնայ գալ յաղթական Ֆի- նկլայի մօտ:

Յանկարծական տրամ մը սրիչ կերպ կը տնօրինէ եր- կու երիտասարդներուն ծրագիրները:
 Գիշեր մը Ֆինկլա, անկողին մտնելէ առաջ պզտիկ շշուկ մը իմանալով, կը կարծէ որ մօրաքոյրն է որ կու- գայ պառկելէ առաջ անգամ մըն ալ սիրոյ և հաշտու-

թեան խօսքեր ընելու իրեն, ճրագը ձեռքը դուր կը բանայ և...
 Դէմ առ գէմ կուգայ Գ. Ժօզէֆ Պլաքի:

— Չեզի ըտի որ շատ շանցած այցելութեան պիտի գա- յի ձեզի, կ'ըսէ կեզժ անզրիացին՝ գէշ ծաղրով մը: Այս բոլոր ժամանակը ձեր կարծածէն աւելի մօտ էի ձեզի, բայց չկրցայ աւելի կանուխ ձեզի մօտենալ: Հօրերնուց ա- զամանդներուն համար եկած եմ՝ Տուէք, ապա թէ ոչ...
 Ու դաշոյնը վեր աւած կը խաղցնէ ձեռքին մէջ, երբ Միս Թրէսոսը, որ Ֆինկլան տեսնելու եկած է, երկուքին մէջտեղը կը նետուի, աւագակին ձեռքը բռնել կ'ուզէ, և շեշտակի կուրծքին կը ստանայ դաջոյնին հարուածը ու դիտապաստ գետին կը փռուի Ֆինկլայի անուշ անունը մը մը շնորով անճառելի ուրախութեամբ, մինչ մանկամարդ աղջիկը կը մարի կ'իյնայ:

Պլաք Ֆինկլայի սենեակը կը խոյանայ և հապճեպով ամէն կողմ ազամանդները կը փնտռէ ի զուր: Հայհոյու- թիւն մը կ'արձակէ ու դուրս կը խուժէ:
 — Կարծուածէն աւելի վարպետորդի է, ու հարկ պի- տի ըլլայ որ նորէն ան անիծեալ Հայաստանը դառնամ կեանքիս մնացեալ օրերը հոն անցընելու: Եթէ արթուն չըլլար ու դալս չիմանար, կրնայի չորս դին պրպտել ու ելլել երթալ առանց մարդու զուր ցաւցնելու: Հիմակ ա՛լ ամէն բան լմնացած է, ու Օքսֆորտն ալ, անոր կըր- թութիւնն ալ գետնին տակը անցնին, ես ալ հետերջ նին մէկտեղ:

Նայուածքը մանկամարդ աղջկան զգայազիրկ մարմին վրայ կ'իյնայ:

— Ա՛խ, օ՛րջափ նիտի ուզէի... կը մոլտայ: Ոստի- կանութիւնը մէկ քանի ժամէն ետեւս պիտի իյնայ: Չէ՛, ազամանդները վրան չեն:
 Ֆինկլան վեր կ'առնէ՝ վրան-զուր ուշադրութեամբ պրպտել յետոյ, և անկողին վրայ կը նետուի՝ իր հաստ ու կարմիր շրթունքները անոր ճերմակ ծոցին կակղութեանը մէջ թաղելով նօրէն ու նօրէն: Յետոյ դուրս կ'ելլէ քրքր- մըն շնորով:

— Ա՛ս էր պակաս խելքս գլխէս աննելու համար: Ի՛նչ աղտոր էր:
 Բայց հեռաւոր դրան մը բացուելուն ձայնը իրեն կ'ազ- դարարէ թէ ժամանակ է փախչելու: Իր աճապարանքին՝ մէջ, կը մոռնայ իր զամանկոսեան դաշոյնը որուն վրայ «Գարա Օղլու» փորագրուած է:

Երբոր Ֆինկլա կ'ուշաբերի, դաշոյնը կը գտնէ, կը կարգայ տիրջը անունը, եւ կը լիշէ թէ ուր հանդիպած էր Ժօզէֆ Պլաքի:

Միս Թրէսոսը յուզարկաւորութենէն յետոյ, Ֆինկլա երբ ինքզինքը մինակ կը գտնէ հին տանը մէջ, այժմ տի- րացած խոշոր հարստութեան մը որ երբեք միտքէն չեր անցած թէ կրնար իրենը ըլլալ, կ'ուխտէ հալածել իր խեղճ մօրաքոյրը սպաննիլը:

— Ես ալ հեաց կուգամ, կը յայտարարէ Գոլսըն քին՝ որուն կը հաղորդէ մանկամարդ աղջկը իր որոշումը: Կամ ես զինքը կը սպաննեմ, կամ ինք զիս: Հիմակ ինչ պիտի ընէր:

— Կարելի եղածին շատ շուտ է. Պոլիս պիտի երթամ և Երթողուտի իմացնեմ: Ապահով եմ որ Գարա Օղլուն իր երկիրը զարձած է: Չի համարձակիր հոս մնալ:

Հակառակ Ֆինկլայի Թախանձանքին, կոյր բանաստեղծը կը պնդէ անոր հետ ճամբայ ելլելու: Զակատագրական ուժ մը կը մղէ զինքը. չուզէր խոստովանիլ, բայց չի՛ կրնար ազրիլ մանկամարդ աղջկէն հեռու, ու իրեն համար ինչ աւելի երջանկութիւն քան եթէ իր ապարդիւն կեանքին գնովը ո եւ է օգտակարութիւն մը ընձեռել անոր:

Շարաթէ մը ճամբայ կ'ելլեն, հետերնին առած քինի հաւատարիմ սպասուորը թոժօրն:

* * *

Կ'երևակայեց անշուշտ Էրաստուտի ուրախութիւնը երբ Բերա տանը առջև մէկէն իմէկ դիմացը կը գտնէ Ֆինկլան, ու իր զգացած բոլոր կատաղութիւնը՝ կրքոր քիչ ետքը կ'իմանայ Գարա Օղլու սրիկային նոր շահաակութիւնը: Ինքն ալ կը բռնուի մանկամարդ աղջկան վերժառուտեան կրքէն, ու կ'որոշեն անմիջապէս Սրվազ երթալ՝ Իսկէստերունի ճամբով, հոն տեսնելու համար թէ ինչպէս կրնան աւազակին հետքը գտնել:

— Հա՛, յուր մը ունիմ, կ'ըսէ քիչ ետքը Էրաստուտ խնդարով: Միս Ուիլսընէն նամակ մը առի: Ասերիկայէն ձանձրացեր է, ու նորէն Սրվազ գացեր է: Կ'ենթադրեմ որ Ամերիկան է որ իրմէ ձանձրացած ըլլալու է, ու Գարա Օղլուն տեսնելու փափաքն է սը զինքը Սրվազ տարած է նորէն:

Գոլսըն քին ալ, իր սպասուորովը, իրենց պիտի ընկերանայ, և շորսերնին մէկ կը տեղաւորուին ուստական լագարեթ շոգեսաւ որ զիրենք Իսկէստերուն պիտի տանի: Շոգեսաւը լեփ լեցուն է ուստ ուխտաւորուհիներով որոնք ստաւուրնէ մինչեւ իրիկուն թէյ կը խմեն, ու գաւաթին վար կը գնեն միայն՝ աղօթքներ երգելու համար. որչափ աւելի թէյով կը սոգորուին, շերմեանդութիւննին այնչափ կ'աւելնայ. թէյ ու խանգ կը քրտնին հաւասար չափով: Այս ուխտաւորուհիներէն շառը մոյկ ու ոչխարի մորթ հագած են, ու երազը լուացուիլ ուզեն, ջրի գոլլի մը շարժը կը շարսին: Իրենցմէ մին, ափը զոյլին մէջէն անցրնելով, բերանը ջրով կը լեցնէ եւ կաթիլ կաթիլ կը կաթնեցնէ իր ընկերուհուն վեր զարձած երեսին վրայ: Բայց ասիկա շատ չպատահիր, որովհետեւ ուխտաւորնէն շատ քիչը լուացուելու պէտքը կը զգան:

Ֆինկլա խօսքի կը բռնուի իրենց խցիկներուն սպասուորին հետ: Իր ուղադրութիւնը կը գրաւէ ուխտաւոր զեղացի մը, որ միաներէն քիչ մը աւելի հագուած է, եւ մէկգի կեցած է՝ առանց միւսներուն երգերուն ու թելին

մասնակցելու: Ու ահա սպասուորին կը մտնայ, եւ տար բերնով կը սկսի Ֆինկլայի զուրցել թէ սխալ ըրած է, թէ ուխտաւորութեան համար հոանդը անհետացած է, թէ կը զգայ որ անձնուրացութեան կեանքը իրեն համար չէ, ու օրհնեբզութիւնները կ'ատէ: Իր փափաքն է աշխարհ տեսնել: Անգլիացի տիկինը սպասուորի պէտք չունի: Եթէ այո, ինք պատրաստ է անոր ծառայելու շատ չնչին վարձքով մը. պատուական խոհարար է ինքը: Փող տիկինը անգամ մը փորձէ:

— Ինչ կ'ըսե՞ս, Էրաստուտ, կը հարցնէ Ֆինկլա՝ երբ որ սպասուորը ուխտաւորին փափաքը կը յայտնէ:

— Նախ մէյ մը իր յանձնարարականները նայելու եմ, եթէ ունի, կ'ըսէ Էրաստուտ շքութեամբ: Սիշէ ան ապիւրատ խոհարարը՝ զոր հայրը է. Գոլիս վարձած էր:

— Միս ուխտաւորներէն գերագանց կը թուի, ու սրբակշտ մարդու մը պէս կ'ըսէ կոր որ միտքը փոխած է, կը թելագրէ Ֆինկլա: Բեղրպուրկէն պատուական յանձնարարագրեր ունի: Ես չեմ կրնար կարգալ, բայց ըստ սպասուորը կ'ըսէ կոր թէ շատ գահացուցիչ են: Մենք մարդու մը պէտք ունինք ձիերուն եւ միտ բաներուն նայելու, եւ լաւագոյն է՝ մէկը վարձել որ Հայ չըլլայ: Ռուս մը որ բնաւ Հայաստան եղած չէ, ճիշտ մեզի պէտք եղածն է:

— Շիտակ է: Անգլիերէն կը խօսի:

— Շատ լաւ, կարծեմ: Անունը իման իմանովիչ է:

— Ատիկց աւելի Ռուս կարելի չէ ըլլալ, կ'ըսէ Էրաստուտ խնդարով: Մինչեւ Սրվազ երթալու համար զինքը կը վարձեմ: Հոն հայրս իրեն գործ մը կը գտնէ հարկաւ:

Ու այսպէս իման իմանովիչ Էրաստուտի ու Ֆինկլայի ծառայութեանը կը մտնէ անժամաբար:

Իսկէստերուն կը հասնին: Էրաստուտ կ'որոշէ անմիջապէս ճամբայ ելլել՝ այդ տենդոս տեղը չմնալու համար, ու իմանը կը գրկէ ջորիներ գտնելու: Ռուսը քիչ ետքը կը դառնայ ջորիներով, ու զանոնք կը բեռնէ փորձ ճարտարութեամբ մը:

— Չի գիտեր որ Ռուսիա ջորի ունիք, կ'ըսէ Էրաստուտ՝ իմանի փորձառութենէն զարմացած:

— Կ. Պոլիս տըրվեցայ, հայրի՛կ, կը պատասխանէ իման հլութեամբ, ու կերթայ միտ անասունները բեռնընելու:

— Աչքդ այդ մարդէն մի՛ գատեր, թոժօրն, կ'ըսէ Էրաստուտ Անգլիացի սպասուորին: Շատ բան գիտէ կոր:

Յաջորդ իրիկունը, ճամբորդները, որ իրենց հետ հինգ զապթիէ առած են, կ'իջեւանին դաշին մէջ, քիւրտի մը հիւղակը զոր ամբողջովին կը վարձեն: Իման պատուական ընթրիք մը կը պատրաստէ իրենց, ու քիչ ետքը ա՛մէն ոք իր տեղը կը քաշուի հանգչելու:

Իման իմանովիչ միայն, աչքերը յամառուէն բաց, կը հօկէ:

Լ. ՉԱՐԹՈՒՄԵԱՆ

(Շարունակելի)

ՆՈՐՈՒԹԻՒՆ ՍԸ

Կ. Պոլսոյ Թերթերը ծանուցին թէ Խուպեօրեան Մահտեսի Կարապետ աղա Կեօարացի հայ վաճառականը ազգին կաակած է 3,000 ոսկի որուն տոկոսը եկեղեցական եւ կրթական հաստատութեանց պիտի յատկանայ: Այդ կտակին մէջ ուշագրաւ տրամադրութիւն մը աչքերնուս կը զարնէ: Տարեկան 15 ոսկի յատկացուած է Իզմիրեանց գրական մրցանակին: Ինչպէս զիտենք, Ռուսիացի հանգուցեալ Իզմիրեանց կարեւոր գումար մը թողած է որուն տոկոսը, տարեկան 60 ոսկի, իբր գրական մրցանակ կը տրուի Կ. Պոլսոյ Պատրիարքարանին միջոցաւ: Մահտեսի Խուպեօրեան այդ գումարը 75 ոսկի կը բարձրացնէ:

Կեօարացի վաճառականին որոշումը բարենշան երևոյթ մը կը համարինք երկու տեսակէտով: Ահա առատորի մարդ մը, որ հասնօրէն մեծ զարգացում մը ունեցած ըլլալու չէ, կ'ըմբռնէ թէ գրականութիւնը է այն ստատարներէն որոնք հայ ժողովուրդը կը պահպանեն ու կ'ազնուացնեն, ուստի եւ ազգին բարիքը փափագող հայ մը գրականութեան բարգաւաճումին աջակից մը պէտք է զանայ: Վանքի, եկեղեցիի եղած կտակները որոնք «բարեպաշտական» կը կոչուին, աւելի անձնասիրական զգացումներ կը հաւաստեն ըստ թէ ազգասիրականներ: Մեանող մը իր հոգիին փրկութիւնը կը մտածէ: Խղճի ազատութեան իբր ջերմ բարեկամ, չենք կարող ո՛ր եւ է զիտօգութիւն ունենալ ընդգէմ հոգեօր հագածութեան: Բայց յետ մահուան իւրաքանչիւր հայու հոգիին վիճակուած բաղդատութիւնը ոչ ոք կը շահագրգռէ. ու ոչ ոք ալ պարտականութիւն ունի լոկ իրենց հոգին մտածողներուն մեծապէս շնորհակալ ըլլալ: Գրական կտակ մը սակայն հանգերձեալ կեանքի խնդիրներու հետ ո՛ր է յարաբերութիւն չունի. զուտ աշխարհային գործ մըն է, եւ գուցէ հոգիին քիչ մըն ալ Քրիստոսբեր: Մահտեսի Խուպեօրեանի կողմէն գրականութեան մեր գրականութեան յատկացուած գումարը որքան որ ալ փոքր է բաղդատմամբ ուրիշ նպատակներու նուիրած գրամին, բայց կարեւորութիւնը նոր գաղափարի մը յղացումին մէջ կը կայանայ, եւ այդ գաղափարը կրնայ որ մը բեղմնաւորի:

Այդ նուիրատուութիւնը ուրիշ տեսակէտով մըն ալ իբր նորութիւն կը թուի: Մահտեսի Խուպեօրեան կըրնար իր անունին առանձին մրցանակ մը հիմնել, առանց մեզադրանք մը լսելու, բայց աւելի գործնական մտքով մը շարժեցաւ: Ուղղամիտ եւ անշահախնդիր ազգասիրութիւնը ընդհանրապէս գործնական գաղափարներ կը յղանայ:

Կտակարարը չէ մտածած թէ ինչ եղանակաւ կտրելի իր յիշատակը որոշեալ ժամանակներ փաստորել տալ, այլ գրականութեան զարգացումին էն նպատաւոր եղանակին վրայ խորհած է, եւ այս նպատակին հասնելու համար օգտակարագոյն տեսած է արդէն հիմնուած գործ մը աւելի ամրապնդել ըստ թէ նմանօրինակ ուրիշ հաստատութիւններ հիմնարկելու հետամտիլ: Իզմիրեանցի 60 ոսկիի մրցանակը երբ նորանոր յաւելումներով ստանալուն այն ատեն իրապէս մեծ գործերու ստեղծման պիտի ծառայէ: Այսօր վանքի շրջանակներէ պուրս ոչ ոք կրնայ մտաբերել շատ տարիներու աշնութիւն պահանջող երկասիրութեանց հետամտիլ լոկ 60 ոսկի գումարի մը վրայ յոյս դնելով, եւ այն ալ մէկ անգամի համար: Օր մը անտարակոյս պիտի փոխուին մեր կեանքին արդի պայմանները, ու ան ատեն Իզմիրեանցի կտակը ազգային մտածութեանց համաձայն պիտի գործադրուի. այդ օրը գրականութեան համար կազմ եւ պատրաստ մեծակ գումար մը պիտի զիրացնէ բազմազատոր երկասիրութեանց ձեռնարկները:

Խուպեօրեան Մահտեսի Կարապետ իբր վաճառական եւ գործի մարդ իր այս գործովը կրնայ ազգել այն ամէն գործի մարդերուն վրայ որոնք բան մը ընել կուզեն եւ չեն զիտեր թէ ինչ պիտի ընեն:

ՕՐԱԳՐՈՂԻ ՅԻՇՈՒՄՆԵՐ

Կ. Պոլսոյ մամուլին շատ նպատաւոր տնօրինութիւն մը գրեթէ առանց ուշագրութիւն գրուելու անցաւ: Վերջին օգոստոսէն ի վեր Թիւրքիոյ Թերթերուն բուլի տուրքը շնչուած է: Երկու բարայի հարկը, շատ ծանր բեռ մը ընդհանուր օրագրութեան համար, մասնաւորապէս հայ մամուլը կորաքամակ կը պահէր: Տաք փարայի վաճառուող փոքրածաւալ Հայրենիքը հարկադրուած էր տարին 1,000 ոսկի տուրք վճարել: Պոլսոյ մեր մամուլը հիմակ նիւթապէս կը հանգստանայ. երկու հազար օրինակ տպուող Թերթ մը ահա յանկարծ տարին 300 ոսկի գումար մըն է որ բացէն կը շահի:

Այդ նիւթական առաւելութիւնը մամուլին բարոյական զարգացմանը ո՛ր եւ է օգուտ չունի: «Ինչերնուս պէտք բուլին շնչումը, կ'ըսէր մեզի Պ. Վուրթրաս, Նեօլոգոսի տէրն ու խմբագիրը, երբ քանի մը տարի առաջ այդ ինչորով կը զբաղէինք, բուլը Թո՛ղ Քոյ, ու գրաքննութիւնը վերնայ:» Գաղափարի համար աշխատող հրապարակագիր մը բնականաբար բուլն էր որ երկու շարիքներուն մեծագոյնը չպիտի համարէր: Չեմ կարծեր որ Պոլսոյ օր

բարոյեցողները գրաքննութեան գէտ ներքինը ըմբոստացում
մը գգան: Պոլսէն հեռացան ամէն տնոնք որ գաղափարի
կը սպասարկէին: Պ. Վութիրաս ալ իր թերթը Աթէնք փո-
խադրեց: Մնացողներուն համար, հայ բլան թէ յոյն,
Քիւրք թէ եւրոպացի, ամենուն համար՝ «կեանք իմ՝ ազ-
նաւորաց»:

Երբե՞ն երբե՞ն օակայն երբ ձեռքս պոլսական թերթ
մը կ'անցնի ինձի այնպէս ի՞նչ կը թուի թէ բաներ մը
փոխուած ըլլալու են անգին, վարը: Օրագիրներուն մէջ
աչքիս զարկին «յիմար», «յիմարանոց», «աստղ»,
«աստղարաշխութիւն» եւ ասոնց նման քանի մը ուրիշ
աւարարագ բացատրութիւններ որոնք մեր օրովը մամուլին
էջերէն աքտորման դատապարտուած էին:

Գրաքննութիւնը «ամպէն հոտ անոզ» էր: Օր մը
«յիմարանոց» և «յիմարարոյժ» բառերուն գործածու-
թիւնը բացարձակօրէն արգիւից, զանոնք ամբաստանե-
լով իրր հակասութեան կան ձգտումներու արտայայտու-
թիւններ:

Չեմ գիտեր ամերիկեան օր թերթէն աննելով հա-
յասա թրքեվար Ճերիտէն բժշկական ճարտարութեան
մը պատմութիւնը հաղորդած էր: Յիմարարոյժին մէկը
խելագարի մը պուտը ճեղքելով, շրջոնք եկած ուղեղը իր
բնական դիրքին վերագարձուցած էր, ու յիմարն ալ խե-
լոցցուցած: Այս անմեղ լուրը Պապը—Ալին տակնուվրայ
կ'ընէ: Ժողովուրդը կարգաւորվ այդ լուրը միթէ պիտի չի
խորհի թէ նմանօրինակ փորձ մը պէտք է կատարել եւ
սուլթան Մուրատին վրայ օր իրր խելագար բանաւար-
կուած կը մնար: Հետեւաբար ո՛ր և է բառ որ գաղափար-
ներու յաջորդութեամբ երնար հեռուէն կամ մօտէն սուլ-
թան Մուրատը յիշեցնել ժողովրդին, զայն իրր մեզգիր
պէտք էր իսպառ տարագրել օրագիրներու էջերէն: Եւ
օակայն յիմարն ալ գոյութիւն ունի, յիմարանոցն ալ, յի-
մարարուծն ալ: Ո՛ր ամէն օր անոնց վրայ խօսելու առի՛ւր
կը ներկայանայ: Հարկը լեզու կը շինէ: Մենք ալ պար-
տաւորեցանք «Ղլխտաւորը» «յիմար»ին, եւ «Ղլխ-
տարայժը» «յիմարարոյժին» հոմանիշ հոշակել:

—Նայէ՛, ատոր խօսք չի կայ, յայտարարեց գրաքնն-
նիչը գոհ սրտով:

Ասկէ կէս դար ետքը, այդ 1888—1893ի — անկէ
ետքիւր չեմ գիտեր— Պոլսոյ հայերէն օրագիրները պըր-
պտող հնախոյզ մը կարծեմ թէ միտքը շատ պիտի յոգ-
նեցնէ կարգ մը բառերու իմաստը կամ անոնց տարօրի-
նակ կիրառման պատճառը իմանալու համար: Հաւա-
նօրէն շատ տղէտ պիտի կարծեն մեզի երբ «Վէնիս»ին
հանդիպին փոխանակ «Աստղիկ»ի, եւ «համարնաբա-
նութեան» բառին ազգեւ հակաբեկած կանգ պիտի առնեն,
«ո՞ք խեղճ պատուելիներ» կոչելով: Այդ օրագրութեան
ապագայ մեկնարանիչներուն գործը թերեւս քիչ մը կը
զերբացնեմ մերձ ընդ մերձ յիշատակութիւն մը նեւտելով
այս էջերուն մէջ: Ո՛ր յետոյ, ամէն բան գիտե՛ն մեր ժա-

մանակակիցներէն անոնք օր մեզի հեա չեն տառապած
գրաքննական ապուշութեանց գէտ մեր մաքաւումի մէջ:

Հայրենիք 1892 մարտ 13ին անպայման ժամանա-
կով գաղաբումի կը գատապարտուէր Վիլհելմ կայսեր նը-
կատմամբ անպատկառ լեզու մը գործածած ըլլալու լան-
ցանքին պատրուակաւ: Բնազգէն դրդեալ արդէն կ'ա-
տէինք կեղծատրութեան ու վարագութեան այդ խառ-
նուրդը: Արեւելք՝ իրր պահպանողական թերթ՝ Վիլհել-
մական էր կրթական խնդրին մէջ օր կը յուզուէր Գեր-
մանիա, իսկ Հայրենիք՝ իրր յղաշարժական՝ հակա-
Դաղարումը որ ընդհանրապէս ամիս մը կը տեւէր,
այս անգամ երկարեցաւ: Նոր ամիսներ անցան, ու թեր-
թին արտօնագիրը իսկ ջնջուած համարուելու վրայ էր
երբ պաշտօնեաներու փոփոխութիւններ վրայ հասնելով
վերերևումիս գիւրացաւ: Պատրիարքարանը ու քանի մը
էջնետիներ գաւած էին մեզի գէտ: Ինչ եւ է. 1892 յու-
լիս 6ին Հայրենիք վերերեցաւ, ու ատեն մը ինքնամ-
փոփ մնացած, սուտ մեռուկ եղած կը մնայինք, ուստի եւ
մեզի ալ հանգիստ կը թողուին: Հազիւ թէ շարաթը երկու
երեք անգամ ջնջումի օպանալիք կ'իմանայինք գրաքնն-
ութեանէն: «Եթէ նորէն ըմբոստանաք, ա՛լ այս անգամ
ջնջում է, եւ ոչ թէ դաղարում» յայտարարուած էր Հայ-
րենիքին արտօնատիրոյր: Խոհեմութիւնը առժամաբար
պարտաւորիչ էր: Ամբողջ վեց ամիս ասոնց գաղաբումի
ապրեցանք: Մէ, երջանկութիւննիս աներեւակայելի էր,
կրնա՞ր երկարաաեւ ըլլալ: Շաբաթ իրիկուն մըն էր, մեր
յիշողութեանը մէջ անջինջ մնացած իրիկուններէն մին,
—եւ մատով չէ օր կը համրուին այդ իրիկունները—
երբ գրաքննիչը ներս մտաւ կամարակապ սենեակէն օր
խմբագրական կեդրոնավայրն էր, Բաշալեանի վարչութեան
ներքէ:

Ո՞վ տեսած է պարկեշտ արկղակալ մը որ պարա-
գաներէն մղուած խոռոք է իրեն յանձնուած գրամը, այդ
տարաբազլը տեսնողը աչքերուն առջև իրո՞ղ պատկե-
րացնէ անոր դէմքը գործը երևան եկած պահուն, եւ
ան ատեն կրնայ քիչ շատ երեւակայել դիմագծերն մեր
խեղճ գրաքննիչին երբ այդ շաբաթ իրիկունը դողողուն
ոտքերով եկաւ ինկաւ աթոռի մը վրայ, Բաշալեանին
ըովը: Հասկցանք թէ աղէտ մը կը օպանայ մեզի: Ան-
միջպէս շուրջը բոլորեցանք: —Քիչ մը ջուր, մրթմթաց
մարած ձայնով մը: Քանի մը կաթիլ առաւ: Ճամբեցինք
ով որ մենէ դուրս կար, եւ դանբը փակելով, ջանացինք
իմանալ թէ ի՞նչ կայ, ի՞նչ է պատահար:

—Սո՛ւ, բօաւ խեղճը մարմրած ձայնով. գացինք
լմեցանք, թերթը ջնջուած, եւ Ղարպ—Թարապուլուս
գուց Աքեա:

Քիչ մը շունչ առինք: Աա էր նէ բան մը չէր: Թիւրք

իշխանութիւնը աջօր զրկուելիք քաղաքական յանցաւարներուն ականջին նախապէս բան մը կաթեցնելու օգտօրութիւնը չունի։ Թերթին ալ գազարումին գուժը իստօֆ աղան կը բերեր առանց մեր կարծիքը առաջուց իմանալու ձանձրոյթը մեզի պատճառելու։

— Ի՞նչ կայ նէ ան ըսէ, պնդեցինք։

— Ի՞նչ պիտի ըլլայ, նայինք հիմակ ես ու գուց ընտոր պիտի ազատինք։

— Ճանրմ ինչ կայ նէ ան ըսէ։

— Ի՞նչ պիտի ըլլայ. ո՞ր է օա 180 թիւը։

— Ի՞նչ, 180 թիւը։

Ինչ եւ է ըսինք, հին բան է. հիմակ 360ը անցած էինք։ Լաւ չեմ յիշեր թէ 180 թէ 182երորդ թիւն էր. աօինք սկօսանք նայիլ, գրաքննիչն ալ չէր գիտեր թէ ինչ էր խնդիրը։ Ամէսցս ալ աօինք նայեցանք. մէկ մէկ նիւթի վրայ ուշադրութիւն զարձուեցաւ. բայց ես յիշելով այդ օրերը Մանգոսմէին պատահածը՝ անմիջապէս անգրագարձայ թէ վաճառք «Օրուան կեանք»իօ մէջ փնտռելու է։ Գրաքննիչին ըսինք թէ «բան մը չի կայ, ոչինչ բանի համար գող ելեր է»... սիրտը հանգարտեցնելով ճամբեցինք որ երթայ հանգիտ կիրակի մը ընէ, եւ մենք սկօսանք մեր տէրտը նայիլ։

«Օրուան կեանք»ը կը զբաղէր օրուան մեծ խնդրովը որ քուրբային մէջ կը կայանար։ Քոյերան Պոլիս երևցած էր, եւ այդ այժմութեան շուրջը կը գտնար ամէն մտտաանջութիւն։ Ու ես ալ այս աթիւ կը պատմէի յիշատակ մը 1865ի քուրբայէն։ Այդ ահարկուծի տարին Օրթագեղի եկեղեցիինօ ունէինք բարի քարոզիչ մը, կապուտիկեան Յովհաննէս եպիսկոպոսը, որ ժողովուրդը հանդարտեցնելու համար ժամուն բեմէն կը ծանուցանէր թէ «սիրելի ժողովուրդ, մի՛ վախնաք, բան մը չի կայ. Եսիկ աստղն է, քանի մը օրէն կ'անցնի կ'երթայ, ու ամէն բան կը լինայ»։ Ու կ'աւելցնէի սա իմաստով բառեր. «Եսիկ աստղը անցաւ, բայց քուրբան մնաց, մինչեւ որ հարաւն հրգեհ մը ծագեցաւ, ճարակեցաւ հարաւային սաստկաշունչ հովէն մղուած, եւ քից տարաւ քուրբան»։ Ակնարկութիւնս Սամաթիոյ մեծ հրգեհին էր, որուն յաջորդ օրը գրեթէ քուրբան մէկէն ի մէկ անհետացած էր։ Այս առիթը վեց ամիս ետքը նորէն կարգալով հասկցայ թէ եղեռնաւորը «Եսիկ աստղ»ն էր այս անգամ ալ։

Ինչու ալ յօգուածին հրատարակումէն վեց ամիս ետքը կառավարութեան միտքը կ'իյնայ թէ անոր մէջ սուլթանին զեմ ականարկութիւններ կային։ Վասն զի Պոլիս օրը օրին կ'ապրին զեպքերու ազդեցութեան ներքեւ միշտ։

Այդ օրերը երեսպական թերթերը նորէն հրապարակ

կը նետէին Միշին Դարէն ի վեր քանի մը տարին անգամ մը ժողովուրդները ահարկուծ գուշակութիւն մը վերջնաշխարհը։ Քիչ օրէն տիեզերք պիտի կործանէր։ Լէվեր Հերալտ լրագրական հասցեագով մը կը նկարագրէր վերջի ըրպէններուն օարօտափաղեցիկ տեսարանը։ Մանրամասնութիւնները Գրիտաօօի օրերէն ի վեր ծանօթ են. արեւը պիտի խաւարի, լուսինը իր լոյսը պիտի չի տայ, եւ աստղերը պիտի թօթափին։ Մանգոսմէն ալ այս գալիքը նորութիւնը իր մանրալուրերուն մէջ կը թարգմանէ, առանց մտքէն անցընելու թէ «աստղերը պիտի թօթափին»ը Երլտըզլար տեօքիսէմէքլէրի թրքացնելով կրնար հակասուլթանական սօճիւր մը գործած ըլլալ։ Գրաքննիչն ալ եւ ոչ իսկ կարգացած է եղեր այդ մանրալուրթ։ Մանգոսմէն երեցածին պէտ ահա այդ հակաերլտական ակնարկութիւնները կարծիր կապարով կը նշանակուին բարեացակամ հայերէ, ու շիփշիտակ Երլտըզի գրաքննութեան կը յանձնարարուին։ Կառավարութեան կողմէն Փանօսեանի թերթին յատկացուած ամսական տասնըհինգ օսկիի գումարը անմիջապէս կը կտրուի, եւ թերթն ալ կը ջնջուի։ Ու երբ Փանօսեան ինքնարդարացման համար դիմում բրած առէն կը յայտարարէ թէ ինչպէս կ'ըլլայ որ Լէվեր-Հերալտէն թարգմանած մէկ լուրին համար ինք պատժուի, ու անգլիերէն թերթը անպատիւ մնայ, պատասխան կ'ընդունի թէ.

— Անկա Երլտը չէ գրած, այլ ասքս. գուն ալ եթէ ասքսար տեօքիսէմէքլէր ըսէիր, քեզի ալ բան մը ըսող պիտի չգտնուէր։

Անցողաբար ըսեմ որ մարդը մարիէ մը աւելի տառապելէ յետոյ միայն ներում գտաւ, շնորհիւ մանաւանդ տասնըհինգ տարի առաջ Ներսէս Պատրիարքին զեմ զըրած յօդուածներուն, իր հաւատարմութեանը վկաները։

Կը գանսին հայեր որոնք երբ Մանգոսմէի պատահած արկածը կ'իմանան, միևնոյն ատեն կը յիշեն վեց ամիս առաջ Հայրենիքի մէջ հրատարակուած Եսիկ աստղի մը խնդիրը, կը վազեն տպագրական տեսչութեան գրասենեակը և ցոյց կուտան զայն հետեւեալ մեկնութիւններով, զոր ետքէն լսեցինք.

«Եսիկ աստղ»ը կը թարգմանեն «պատիկ շուն Երլտըզը» Երլտըզն քիսիսք քիօրէի, որ ոչ այլ ոք կրնայ ըլլալ բայց եթէ նոյն ինքն սուլթանը։ Քոյերային պատճառը, այսինքն երկրին բոլոր աղետներուն պատճառը, սուլթանն է, քանի որ Եսիկ աստղը անոր ականարկութիւն է։ Սամաթիան Սան-Սթեֆանոյի ճամբուն վրայ է. եւ հարաւային հովը որ փչած է անգամ մը, եւ նորէն պիտի փչէ, նոյն ինքն ուսն է որ Սան-Սթեֆանոյի ճամբով արդէն անգամ մը Պոլիս եկած է, քրիտոսնեաները փրկեր է, բայց մտտամբ, ու նորէն պիտի գայ եւ փրկէ մնացեալը։

Մեկնութիւնը որքան աւելի անհեթեթ այնքան ալ աւելի օարօտափաղեցիկ կ'երենայ։ Ընդհանրապէս պարզ

իրագութիւնները, վճիռ գաղափարները չեն որ մարգտ կ'ահարկեն: Ինչ եւ է, մենք այն այլանգակութիւններն անտեղակ թաւով հանդերձ, կրնայինք Մանգոստի գլխուն եկած փորձանքն կահել թէ՛ վասնզը Ենիկ աստղն էր: Առաջին մասնութիւնս եղաւ Պոլիս տպուած 1892ի օրացոյց մը ձեռքս առնել եւ փնտաել Ենիկ աստղը: Յօդուածս հրատարակուած օրերն իսկ օրացոյցը կը նշանակէր «սկիզբն Ենիկ աստղի, վերջ Ենիկ աստղի»: Յետոյ նախեցայ Երուսրի բազմիքը: Քանիչիօյին կը համապատասխանէր Ենիկ աստղ: Ու օրացոյց եւ բազմիք տպագրուած էին Հանրային կրթութեան պաշտօնատան վաւերացմամբ: Այլ եւս հօգ ընելու բան մը չունէինք: այս անգամ ալ փրկուած էինք, մանաւանդ որ տպագրական տեսչութիւնը մեր կողմը պիտի հակէր, վասն զի իր շահն իսկ կը պահանջէր Հայրենիքը արգարացնել: Տպագրական տեսչութիւնը իր վեցամօսայ անհոգութեանը պատճառաւ ինքն ալ մեզի հրը մեղսակից պիտի ամբաստանուէր մեր մեղապարտութիւնը հաստատուած պարագային:

Եւ յարգ ատուուն, կիրակի, մութնուրուուն Գուզկուն, ճուզ Տիվիթեան Յակոբ ԼՖ.ին գիմուս եղաւ: Ազնիւ, բարեօրտ եւ ազգասէր ծերունին, որ մեր գրաքննիչներն մէկն էր, միշտ, ինչպէս կրօնն՝ Հայրայնամ հօգածութեամբ, հայ թերթերը կը պաշտպանէր կառավարութեան առջեւ, ընդդէմ ամէն յարձակութեան: Այն օրն իսկ բոլոր հայ գրաքննիչները, տպագրական տեսուչն ու իր օգնականը մեծ ծողով պիտի կուսարէին Ենիկ աստղին խնդիրը ընդունելու եւ լուծելու համար: Յակոբ ԼՖ.նտին կը շարկէ Վենետիկ, Վիեննա, Պոլիս տպուած Ֆրանսերէն եւ հայերէն բազմիքները, հին ու նոր օրացոյցները, եւ անոնք ամէնքը կը տանի կը լեցնէ տնօրէն պէյին գրասեղանին վրայ, բանալով Ենիկ աստղերուն երեսները:

— Եֆէնտիմ, կ'աղաղակէ, վաթսուն տարի ասաջ Վենետիկի վարդապետներն ալ Եմպահուրին Ենիկ աստղ ըտեր են, Վիեննայի վարդապետներն ալ, վերջերս Պոլիս տպագրուած բազմիքներն ալ նոյնը ըսած են: Հապա սա օրացոյցները, որոնք Մեարիֆին հրամանովը տպուած են, ամէնքն ալ սկիզբն Ենիկ աստղի, վերջ Ենիկ աստղի կը գնեն: Ինչ ընեն խմբագիրները, ընտոր խելքերուն մտքերուն անցընեն թէ ասանկ յիմար մեկնութիւններ պիտի տրուին այս հազար տարուան բառին գրաքննիչները ինչ ընեն, ընտոր մէջէն ելլեն:

— Անանկ է եւ, անանկ է եւ, կը պատասխանեն Պէհնիթ եւ Հըֆըր պիտրը: ու խնդիրը կը փակուի Հայրենիքի նկատմամբ անպարտութեան տեղեկագրով մը:

Ու յաջորդ ատուուն Յակոբ ԼՖ.նտին կը պոստ մեզի:

— Մէյ մըն ալ, սա ձեզի խրատ ըլլայ, աստղ, աստղարաշխութիւն, աստղարաշխ նշովից բառերը բերաննիգ պիտի շահէք, գրիչուց ներքե պիտի չի գան. չէ նէ գացած էք դանգունը:

— Էյ Յակոբ ԼՖ.նտի ինչ պիտի դնենք աստղարաշխութեան տեղ:

— Մենք մեր տղայութեանը համարնարանութիւն կ'ըտէինք, դուք ալ անանկ ըսէք:

Ու մենք ալ համակերպեցանք: Բայց ոչ «համարնարան» կրնայինք անունանել աստղերը, եւ ոչ ալ փոխանակ «աստղազարդ երկնքի» գրել «համարնարանեալ երկնք»: «Երկնքը փայլող լուսարներ» սրակեցինք աստղերը. իսկ քանի մը տեսակ գարձուածքներ պէտք էին ոտանաւորի մը մէջ երկնքին աստղազարդութիւնը բացատրելու համար: Ոտանաւորի հրատարակութիւնը արգիւտելով յայդ դժուարութիւնն ալ ինքնին լուծուեցաւ:

Կը մնար «Աստղիկ»ը զոր անշուշտ «քիչիւք Երլազ» թարգմանելով պիտի քաշկուտէին: «Վենիս»ը օգնութեան կանչեցինք: Կը յիշեմ թէ տարիներ ետքը, Պոլսոյ օրագիրներուն մէջ «Վենիս» կը գործածուէր: Հիմակ չեմ գիտեր:

Ու ըսուեցաւ թէ հայ օրացոյցներուն «Ենիկ աստղ» «Ենիկ մուրակ»ի փոխելու հրահանգ տրուեր է, բայց կարծեմ թէ գործադրութիւնը մոռցուեր է:

Ճշմարիտը սա է որ մենք մուրուած կը մնայինք, ու մեզի հետ ընթերցող հասարակութիւնը: Յուսամ թէ մատենադարանի մը մէկ անկիւնը այս էջերը օր մը հնասերներու աչքին զարնեն ու անոնք ալ մեզի գատապարտելու մուրութեան մէջ չիյնան:

Ա. Ա.

ՄԵՋԻ ԿԸ ՆԱՅԻՆ

Ետքով մը առաջ հետեւեալ անգեկութիւնը հաղորդուեցաւ ինծի:

«Նոր խմբակ մը կը կազմուի ճեղի շախմատի եւ Նոր Կեանքը կործանելու առաջադրութեամբ: Ամէն ինչ պատրաստ է. հանդէսի մը մէջ երեւնալիք յօդուածը արդէն խմբագրուած է. զայն հրատարակ հանելու համար հեռագրի մը կը սպասուի: Մարտնչու՞մը անկէ ետքը պիտի սկսի: Իբր թէ «Հայկական Յեղափոխական Միութիւն» անունով մարմին մը, որուն վրայ երբեմն խօսուեցաւ հանգանակութեան մը առթիւ, զնո առկայ՝ կը պլպլայ եղեր, բայց Նոր Կեանքի խաւարումին կը կարօտի որպէս զի իր լոյսը հայութեան աչքին երենայ:»

Թէ՛ բերանացի լսածներս, թէ՛ նամակներով իմացածներս հրատարակելու պէտք մը չեմ տեսներ: Տեղեկութիւններս համառօտաբար հաղորդեցի խմբագրին որուն անունը կը յեղեղուէր, աւելցնելով թէ՛ «չարամտութեան այս հնարքները աւելի իրեն զէմ լարուած դուրս կրնան համարուիլ քան թէ իմ գէմս»: Արդարեւ ինծի շատ զըժուար է, գրեթէ անհնարին, հաւաքը ընծայել խորհուրդներու որոնց իրականացումը վատութիւն պիտի չհամարուի միայն, — վատութիւնը ո՞մանց աչքին ճիշ շատ ներելի մեղք մըն է, փաստաբանութեամբն այն մեղմացուցիչ պարագային թէ «մարդը ինչ ընէ. ծովը ինչ ողջ օձին կը փարի»:»

Նոր Կեանքի կործանումին համար գրական բարեկամներս ո՞մանց վերագրուած ծրագիրները որոնք լուրերը եթէ երբեք ստոյգ համարուին, այդ խորհուրդները զանոնց յացողներուն որտի շարութիւնը պիտի չապացուցանէին միայն, այլ մտքի ապուշութիւնը: Պարագայ մը որ այլապէս ծանր մեղք մըն է քան թէ վատութիւնը, որ միշտ խելքի բացակայութիւն չենթադրեր: Ինծի շատ զժուար է որտով ապականեալ, մտքով ապուշ կասկածիլ ո՛ր է բարեկամ, քաղաքական ըլլայ թէ գրական, զոր կը յարգեմ ու կը սիրեմ: «Դժուար»ը կ'ուզէի «անկարելի»ով փոխանակել, բայց փորձառութեան յիշատակները մտքիս տարակոյտներ կը թելադրեն:

Այս լուրերուն արժէքը ինչ որ ալ ըլլան, առանց քաղաքական կ'ըսեմ թէ Նոր Կեանքի գէմ ո՛ր է դաւադրութիւն անյաշողութեան դատապարտուած է: Այս հաւաստումս կ'ապացուցանեմ կարգ մը իրողութիւններով զոր ո՞մանց կ'ուզեն անտես ընել:

Այս հանգիստը իմ անձնական սեփականութիւն չէ, այլ՝ քաղաքական մարմին մը կը պատկանի: Աշխատութեան բաժանումի մէջ խմբագրական բաժինը ինծի յանձնուածէ, առանց նիւթական շահը կամ փաստը իմ հաշ-

ուի տեսքով: Մինչեւ 1900 ապրիլ աժիւր Նոր Կեանքի խմբագրական պաշտօնը վարողը եւ չէի, Լոնտոնէն յաճախակի բացակայութիւններու պատճառաւ, ալ պարզ աշխատակից մըն էի: Դիպուածը միայն զի յանկարծ հարկագրեց վերջացած տարին եւ Լոնտոն մեալ: Հաւանական է որ նորանոր կազմադրութիւններ ըստ իմ յայտնած փափաքիս Լոնտոնէն զիս զարձեալ հեռացնեն: Ուստի այս հանդէսին գէմ ուղղուած ո՛ր է հարուած ուղղակի ընդդէմ յայն մարմինն է որ թէ՛ բարոյապէս եւ թէ՛ նիւթապէս Նոր Կեանքին բացարձակ սեփականատէրն է: Աւելորդ չըլլայ այժմ յիշեցնել թէ քանի մը անհատներէ ալլապէս հզօր մարմիններ ու անձնաւորութիւններ այդ մարմինն գէմ աշխատակէս կառուցան, առանց ո՛չ փայտն, ո՛չ ալ մթազին յաշողութեան քը: Անցեալը ապագային գրաւականը համարելով, անցնիմ ներկային:

Նոր Կեանքը իր շորթորդ շրջանը մտաւ նախորդ տարիներէ շատ աւելի բարեյաշող պայմաններու մէջ. ներկայ տարւան համար իր գոյնութիւնը արդէն կատարելապէս ապահովուած է: Հետեւաբար անոր կործանումը ծրագրողներուն հետ շատ զբաղելու պէտք չունինք:

Խնդրին նիւթական մասը փակելէ յետոյ կը գիտեմ վերնագրիս «Մեզի կը նայի ժողովուրդը»:»



Մենք քաղաքական տարագիրներու հացի խնդրի հարկէն ստիպեալ չէ որ Եւրոպա ապաստանած ենք: Ամէնքս ալ Պոլիս նիւթապէս հանդիստ կ'ապրէինք. ու հիմակ Թիւրքիոյ մայրաքաղաքը ո՛ր է ժամանակէ աւելի խմբագիրներուն նիւթապէս հանգստաւէտ կեանքի մը զիրութիւնները կ'ընծայէ, առանց զանոնք անպատուաբեր ո՛ր է յանձնառարութեան հարկադրելու: Անոնք որ «ի խոյզ եւ ի խնդիր հացի», Եւրոպա ելած են ու ձեռնունայն կը մեան, կարող են վերագաճնալ Պոլիս ուր օչ ոք զիրենք պիտի նեղէ:

Ըսեմ նաև. «ազատ օգ չնչելու», ըզձանքէն մղուած ալ չէ որ Եւրոպա փախած ենք: Չափազանցօրէն եսաժող զգացումը միայն մեզի զրգած պիտի ըլլար թողու որ մերինները՝ անդին օտրկութեան ապականեալ մթնոլորտին մէջ հեղձամղձինք եւ ծենք գանք մաքրեցի օլորտին մէջ հեղձամղձինք: Պիտի նմանէինք անոր որ մանտախտի պահուն կը թողու հայր, մայր, եղբայր, քոյր, կին, զակակ ու ինք աղետաւոր քաղաքէն կը փախչի իր անձը պահպանելու համար: Ո՛չ, մեր տեղը հոն պէտք է ըլլար ուր կը տանջուին մերինները. մէկտեղ պէտք էր աշխատէինք մեր ցաւերուն դարմանումին համար: Մէկտեղ ապրիլ, մէկտեղ մեռնիլ, ահա մեր պարտականութիւնը:

Բայց Եւրոպա ենք: Արտանահման մեր ներկայութեան արդարացումը պէտք է փնտռել մեր առաջադրած նպատակին մէջ: Անդին շարժաքաղաք մեր եղբայրներուն տառա-

զանքները վերջացնել, ահա ինչ որ մենք առաջադրած ենք, — կամ՝ առաջադրած բլլալ կ'ենթադրուինք: Ու «բան դամնայն փարեցիս փարեացեալ, ներ պիտի չհամարուինք երբ Երուսա, ու Ամերիկա մէկ կողմէն ամէն հանգստութիւն վայելելով, և միւս կողմէն ալ այնքան առաջ ապրելով որքան երբեք պիտի չ'ապրէինք մաս առ մաս քաղաքը: Բարեկարգեալ Հայաստանի մը մէջ իսկ, ելլենք մենք զմեզ «ազգիս բարութեանը անձնուէրներ», հոշակներ: Նիւթական կեանքի մեր կրած շատ մը առաւելանքներովք է միայն որ մերն ահա ահա եղբայրները մեզի պիտի ներն այն ազատութիւնը զոր մենք կը վայելենք, զիբնք ճգնուած ձգելով անզին բանապետութեան կոչուածի թակին ներքեւ: Նիւթականի առաւելանքովք է միայն որ մենք գեա կապուած կը մեանք հայրենի հողին վրայ սովորած ամենազուտ մերիններուն հետ: Ո՛չ ես, ո՛չ ալ իմ քաղաքական ու գրական բարեկամներէս մէկը որ մը օրանց ակնարկութիւն ըրած ենք նիւթական կեանքին վրայ որով կ'ապրինք մեր առաջադրութեան թուականն է վեր: Մեր որտեղը առաւելագոյն ներքին գահացուծը պիտի շարժանար բաց օդին ենթարկուելով, ու անզր կատարութիւն պիտի թողար: Բայց գանուեցան բարձր իտեղեանին պաշտօն եւ պատարագ մատուցանող աշուսագրի կողմացիներ որոնք մեր անհատական նախակները գոցան, եւ առանց ամենալու գաննը հրատարակեցին, ցոյց տալու համար հայ ժողովրդին թէ օրեր եղած են որ մենք սովորած կարողանալու վասնզին ենթարկուած ենք: Ու մեզի անպատուել կարծեցին իրենց «կե՛ր, ա՛րբ եւ սւրբ լե՛ր», նիւթական երանաւեա կենցաղադարութեան հակադրութեամբը: Այս շարժումութիւնը որ կը ձգտէր հայ ազգին օրորը մեր սրտէն կարել, զտակ, նեակ, այդ գանաթոյն շարժումութիւնը նման այն թոյններուն որոնք փախանակ մահաբերութեան աղէտի արտաբերութեան բարեք կը գործեն, զարմացուծի ազագակ մը իւրեց Հայութեան սրտէն:

— Այսպէս ուրեմ, գոչեց հայ ազգը, գուցե եւս Երուսալայի էն մեծ մայրաքաղաքին մէջ Մուշի, Վանի հայ զեղացիներուն պէս նիւթական կեանքի առաւելանքներով կը տանջուիք եղբր, առանց սակայն ճիկ մը հանելու:

Անշուշտ յանցաւորը մենք չենք եթէ հայ ազգը կողմացիներէն իմացաւ թիւրքիայէն քաղաքական տարագրեալներէ ոմանց համբերող տակունութիւնը, կը վերջնապէս համոզուեցաւ որ այդ առաւելուողները ոչ թէ հանգստութիւն փնտռելու համար Երուսալայ նետուած էին, այլ պարտականութիւն մը կատարելու հաստատ առաջադրութեամբ:

Այդ օրէն ի վեր անլի բան երբեք ժողովուրդը մեզի կը նայի: Ինչ տեսարան պիտի պարզենք իբ աչքերուն, մենք այդ ժողովրդին մատարական առաջնորդներ:

Մեր կողմէն շահամուտութեան ո եւ է յանցանք անլի մեծ ոճիբ պիտի համարիմ բան թէ սուլթանին շարքերուն ամբողջութիւնը: Սուրբ մարմինը կը կտարէ, բայց հողիին զէմ կը փթանայ: «Սուր բո եւ պարանոց մեր» բոին մեր հայրերը շատ գար առաջ, երբ կամ իրենց հողիէն կամ իրենց պարանոցէն հրաժարելու հարկին մէջ գանուեցան: Ձը սխալեցան: Մենք մեր շահախնդրական մրցումներովը ազգին հողիին մէջ բան մը պիտի խորատակենք: Քրիստոս մեզի համար չէ որ բտա՛ անոնց խօսքին եւ ոչ թէ անոնց գործին նայեցէք: Ժողովուրդը մեր գործերուն կը նայի: Պարկեշտօրէն ապրելու իրաւունքը ունինք, բայց իրաւունք չունինք ազգին հողին գիտկանցնելով զայն իրարու ձեռքէ քաշկտակ ու անկէ մեր սրտունըը հայթայթել:

Եթէ երբեք ճշմարիտ է որ զրական բարեկամներէս ոմանք կը մտաբերեն Նոր Կեանքի խնակներուն վրայ ապաստանարան մը յուսալ նաւահանգիստ մը հասնելու համար, պիտի փափազէի որ ինծի ներուէր արհամարհաւ լուծութիւն մը պահելու իրաւունքը: Պիտի շուզէի որ մենք նմանէինք յետ նաւարկութեան կարկուրէի մը վրայ ապաստանողներու որոնք երէկ եղբայրաբար կը ծովէին, ու այսօր կը շանան իրար անզունըը զտորել, պատառ մը հացին միս մինակ արտանալու համար:

Պիտի ներուէի ինծի լուծութիւն պահել: Կը յուսամ սակայն թէ մեր թշնամիներուն շարժումութիւնը անգամ մը եւս պիտի պարտուի:

Ա. Ա.

ԱՆԳԼԻՈՅ ԹԱԳՈՒՇԻՆ

Կ. Պոլսոյ Թերթերը կը հաղորդեն թէ փետրուար 2 շաբաթ, Անգլիոյ Թագուհիին թողման օրը, Կ. Պոլսոյ բոլոր հայ եկեղեցիներուն մէջ հոգեհանգստի պաշտօն կատարուեր է Վիկթորիա Թագուհիին համար: Մասնաւորապէս ուշադրաւ եղած է Մայր Եկեղեցին Պատրիարքին կատարած պաշտօնը, որմէն ետքը դամբանական մը խօսած է: Անգլիական գեապանը փետրուար 4 երկուշաբթի օրը անձամբ պատրիարքարան երթալով շնորհակալութիւն յայտնած է այն ցաւակցական և համակրական զգացումներուն համար զոր հայ ազգը իր եկեղեցիներուն մէջ յայտնած է Անգլիոյ հանգուցեալ վեհապետին համար:

Նմանապէս Պոլիս Պոլսոյ-Հասուգի Աւետարանական մատուռին մէջ ազօրջներ բուրեք են եւ հոգեւոր պաշտօն կատարուեր է: Անգլիոյ գեապանը նոյն երկուշաբթի օրը

չնորհակարութեան այցելութիւն տուած է Ազգայնա Պ. Յակոբ Պոյաճեանի:

Յարութիւն Պատրիարք եւս Երուսաղէմ անգղիական Հիւպատոսարանը երթալով ցաւակցական այցելութիւն տուած է:

Կիրակի փետրուար 3ին, Մանչեսթրի Հայ Հասարակութիւնը Հայոց եկեղեցին համախմբուեցաւ սը Վիկթորիա Թագուհիին Հոգուն համար պաշտօն եւ պատարագ մատոյց Տ. Թորոս քահանան: Հայոց առաջնորդը հանգուցեալ Թագուհիին համար ներբողալից դարձանական մը խօսել յետոյ, նոր Թագաւորին համար ալ երկարակեցութեան ու բարեկալութեան մաղթանքներ րբաւ:

Մանչեսթրի Թերթերը խօսելով այս կրօնական արարողութեան վրայ մանրամասնօրէն կը նկարագրեն Հայոց եկեղեցիին կատարած հանդէսը: Հայ տաճարը իր արեւելեան ճոխ երևոյթը փոխած էր, եւ բոլորովին հանդիսաւոր օուզի սեւերով զարգարուած: Սեղանին մէջ տեղ սեւ շղարշի մէջ կը փայլէր ճերմակ խաչ մը: Դասին մէջտեղ սեղանի մը վրայ հնգկական շալով ծածկուած ճերմակ ժողիկներէ փառաւոր պօսակ մը դրուած էր: Արարողութենէն յետոյ Տ. Թորոս քահանան կարդաց ներքին գործերու նախարարութեան մէկ հեռագիրը, որ պատասխանն էր առաջնորդին կողմէն յանուն Մանչեսթրի Հայոց նոր Թագաւորին մատուցած մեծարանքներուն:

Ամերիկայի Համաժողովէն ընտրուած Ազգային Մայրն Յանձնախումբը իր ատենապետին ստորագրութեամբը հետեւեալ հեռագիրը ուղղած է Անգլիոյ Թագաւորին:

ՆՈՐԻՆ ՎԵՀՈՒՄՔՈՒԹԻՒՆ. ՄԵՄՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ԹԱԳԱՒՈՐԻՆ:

Միացեալ Նահանգներու Հայերս ամենախորին անկեղծութեամբ կը մասնակցինք տիեզերական վշտակցութեան ի մահ մեծ Թագուհիին, եւ կը մաղթենք Ձեր Վեհափառութեան երկար եւ փառաւոր իշխանութիւն մը:

Լ. Ֆրանք,
27, CHESTERTON ROAD,
(ENGLAND)

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՆՍՏԱՆԻ ԿՂՅՈՒԹԻՒՆԸ. «Բրօ Արմէնիա» կը տեղեկացնէ թէ Կ. Պոլսոյ ֆրանսական դեսպան Պ. Բուքսրան, որ իր սուրբանանօտէր քաղաքականօրէնամբը տխրահալակ է, տեղեկագիր մը դրկած է Իրանսայի տարաքին գործերու նախարարութեան, որոնք մէկ կը յայտարարէ թէ Հայաստանի կացութիւնը այնքան ծանր է հիմակ որքան մեծ կոտորածներու միջոցին, եւ գուցէ ապելի ծանր իտի:

ԻՐԱՆԻ ԱՅՆՆԵՐ. Պոլիս գրամատիան տեղ տագնապ կը տիրէ: Թայմզին կը հաղորդուի թէ Մեքքէ դրկուած մեծ կարասանը հարկադրուեց է Պիրոսը կանգ առնել առ ի չգոյ՛ն ստակի: Սուրբանը դիմում րբած է Պանը Օրոմանիէն և Հանրային Պարտքին որոնք բացարձակապէս մերժեցնեն թէ եւ քիստոտօտօտիան հարկ եղեր է Ասիական երկարադիւնկերու ընկերութեանէն տան 50,000 ոսկի գումար մը:

ՄԱԿԵՒՈՆ ԴԿՆ ԽՆԴԻՐԸ. փետր. 8 և 10ին Պերմանիոյ, Անգլիոյ եւ Ռուսիոյ դեսպանները հետզհետե սուրբանին ներկայացեր են: Պոլսոյ շրջանակներուն մէջ մասնաւոր ուշադրութիւն գրաւած է Ռուսիոյ դեսպանին տրուած ունկեղրութիւնը: Կը հաստատուէ թէ Պ. Չինովիթ սուրբանին յայտարարած է որ Ռեդիպոսի կասկաւարութիւնը կը հակառակի Մակեդոնական քովիքիին շարժումներուն:

Դեսպանը գանգատեր է որ թիօք իշխանութիւնը մեղմօրէն կը վարուի յեղափոխականներուն հետ: Յայտարարեր է թէ ընդհարումի առեւն Ռուսիա չեզոք պիտի մնայ:

ԱԼՂՈՆԻ ԱՅԻՆԵՐԸ կամ անկախութիւն կամ ինքնավարութիւն կը պահանջեն: Դուստր շատ մտաւտանդութեան մէջ է:

ՀԱՍՏԵՒ ԵՒ ԲԱՍՆԵՒԻՆ

ՆՈՐ ԿԵՒՆԻՐԸ կը հրատարակուի ամէն ամսու լին եւ 13ին: Բաժնեկիւն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տոլար:

ՆՈՐ ԿԵՒՆԻՐԻ վերաբերեալ նամակ ու բաժնեկիւն ղրկել առ

L. FRANCE,
27, CHESTERTON ROAD,
(ENGLAND) LONDON, W1